ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» 2006 թվականի հունիսի 15-ի ՀՕ-142-Ն օրենքը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ»»

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Հանրությունը, հրապարակումը և լույսընծայումը

1. Սույն օրենքի իմաստով հանրություն է համարվում անձանց խումբը, որը դուրս է ընտանիքի կամ անձնական ծանոթների շրջանակից:

2. Սույն օրենքի իմաստով հրապարակում է համարվում հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների օբյեկտը հանրությանը առաջին անգամ ցանկացած եղանակով մատչելի դարձնելը իրավատիրոջ կողմից կամ նրա համաձայնությամբ:

3. Սույն օրենքի իմաստով լույսընծայում է համարվում իրավատիրոջ կողմից կամ նրա համաձայնությամբ հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների օբյեկտի արդեն արտադրված օրինակները քաղաքացիական շրջանառության մեջ դնելը՝ հանրության պահանջները բավարարող քանակով՝ պայմանավորված ստեղծագործության բնույթով:

ԳԼՈՒԽ 2
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 2. Հեղինակային իրավունքի օբյեկտները

1. Հեղինակային իրավունքի օբյեկտ է համարվում գրականության, գիտության և արվեստի բնագավառներում հեղինակի ստեղծագործական աշխատանքի յուրօրինակ արդյունքը (այսուհետ՝ ստեղծագործություն), որն արտահայտված է գրավոր, բանավոր կամ այլ օբյեկտիվ ձևով՝ անկախ դրա ծավալից, նշանակությունից և արժանիքներից:

2. Գրավոր կամ այլ կերպ նյութական կրիչի (ձեռագրի, մեքենագրի, նոտագրի, տեխնիկական միջոցների օգնությամբ ամրագրված՝ ներառյալ ձայնագրությամբ կամ տեսագրությամբ արտահայտված, երկչափ կամ ծավալային-տարածքային ձևով պատկերի վրա ամրագրված և այլն) վրա արտահայտված ստեղծագործությունը համարվում է օբյեկտիվ ձև ունեցող՝ անկախ երրորդ անձանց համար այն մատչելի լինելուց:

3. Նյութական կրիչի վրա չարտահայտված բանավոր կամ այլ ստեղծագործությունը համարվում է օբյեկտիվ ձև ունեցող, եթե այն մատչելի է դարձել երրորդ անձանց ընկալման համար (հրապարակային արտասանություն, հրապարակային կատարում և այլն):

4. Հեղինակային իրավունքի օբյեկտներ համարվում են՝

1) գրական ստեղծագործությունները (պատմվածք, վեպ, վիպակ, էսսե, բանաստեղծություն և այլն).

2) համակարգչային ծրագրերը, որոնք պահպանվում են ինչպես գրական ստեղծագործությունները.

3) գիտական ստեղծագործությունները (գիտական հոդված, զեկույց, աշխատություն և այլն).

4) տեքստով կամ առանց տեքստի երաժշտական ստեղծագործությունները.

5) պարարվեստի և մնջախաղի ստեղծագործությունները.

6) դրամատիկական և երաժշտա-դրամատիկական ստեղծագործությունները (պիես, օպերա, օպերետա, բալետ, լիբրետո և այլն).

7) լուսանկարչական ստեղծագործությունները.

8) տեսալսողական ստեղծագործությունները (կինո-հեռուստաֆիլմերը, անիմացիոն ֆիլմեր, կարճ երաժշտական տեսահոլովակները, գովազդային հոլովակները, փաստագրական, փաստավավերագրական և այլ ֆիլմերը).

9) գեղանկարչության, քանդակագործության, գրաֆիկայի և կերպարվեստի այլ ստեղծագործությունները.

10) ճարտարապետական ստեղծագործությունները, այդ թվում՝ քաղաքաշինական և լանդշաֆտային դիզայնի ստեղծագործությունները.

11) դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի ստեղծագործությունները (այդ թվում՝ տառատեսակները).

12) քաղաքաշինությանը, աշխարհագրությանը, տոպոգրաֆիային, երկրաբանությանը, ճարտարապետությանը և այլ բնագավառներին վերաբերող քարտեզները, նախագծերը, էսքիզները, եռաչափ ներկայացումները և այլն.

13) գիտական, ուսումնական կամ այլ բնույթի զեկույցները, շնորհանդեսները և այլն.

14) այլ ստեղծագործությունները, որոնք համապատասխանում են սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներին:

5. Հեղինակային իրավունքով պահպանվում են նաև ածանցյալ և կազմածո ստեղծագործությունները՝ առանց վնաս հասցնելու բնօրինակ ստեղծագործության հեղինակի իրավունքներին, մասնավորապես՝

1) թարգմանությունները, ադապտացիաները, փոխադրումները, դաշնավորումները, վերադաշնավորումները, մշակումները, վերամշակումները, բեմականացումները, վերափոխումները և արդեն գոյություն ունեցող ստեղծագործությունների կամ այլ նյութերի փոփոխությունները, որոնք համապատասխանում են սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներին.

2) տվյալների բազաները և այլ կազմածո ստեղծագործությունները, որոնք ըստ իրենց պարունակության ընտրության և (կամ) տեղաբաշխման ստեղծագործական աշխատանքի արդյունք են:

6. Աճանցյալ ստեղծագործությունները պահպանվում են հեղինակային իրավունքով՝ անկախ այն ստեղծագործության հեղինակային իրավունքի օբյեկտ լինելու հանգամանքից, որի վրա դրանք հիմնված են կամ որը ներառում են:

7. Հեղինակային իրավունքով պահպանվում է նաև ստեղծագործության բաղադրիչ մասը, անվանումը (վերնագիրը), եթե այն կարող է օգտագործվել ինքնուրույն և համապատասխանում է սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներին:

8. Սույն օրենքով նախատեսված պահպանությունը տարածվում է ինչպես հրապարակված, այնպես էլ չհրապարակված ստեղծագործությունների վրա:

9. Արդյունաբերական դիզայնը կարող է պահպանվել նաև հեղինակային իրավունքով, եթե այն համապատասխանում է սույն օրենքի դրույթներին: Սույն օրենքի համաձայն հեղինակային իրավունքով պահպանվող արդյունաբերական դիզայնին պահպանություն տրամադրվում է նաև «Արդյունաբերական դիզայնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով: Այս դեպքում գրանցված արդյունաբերական դիզայնի նկատմամբ գրանցման գործողության ողջ ընթացքում գործում է արդյունաբերական դիզայնի մասին օրենսդրությունը:

Հոդված 3. Հեղինակային իրավունքով չպահպանվող օբյեկտները

1. Հեղինակային իրավունքի օբյեկտներ չեն համարվում՝

1) ֆոլկլյորի ստեղծագործությունները.

2) օրվա նորությունների կամ ընթացիկ իրադարձությունների և փաստերի մասին տեղեկատվությունը: Օրվա նորությունների կամ ընթացիկ իրադարձությունների և փաստերի մասին տեղեկատվությունը հանդիսանում է հեղինակային իրավունքի օբյեկտ իր արտահայտման ձևով, եթե այդ արտահայտման ձևը ստեղծագործական աշխատանքի արդյունք է.

3) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կամ պաշտոնատար անձանց պաշտոնական փաստաթղթերը, այդ թվում՝ օրենքները, այլ իրավական ակտերը, պայմանագրերը, դատական ակտերը, միջազգային կազմակերպությունների պաշտոնական փաստաթղթերը, ինչպես նաև դրանց

պաշտոնական թարգմանությունները.

4) պաշտոնական խորհրդանիշերը, նշանները և պատկերները (դրոշներ, զինանշաններ, կնիքներ, շքանշաններ, ճանապարհային նշաններ, դրամանիշներ և այլն).

5) գիտական հայտնագործությունները, գաղափարները, սկզբունքները, մեթոդները, ընթացակարգերը, տեսակետները, համակարգերը, արարողակարգերը, գիտական տեսությունները, մաթեմատիկական բանաձևերը, վիճակագրական դիագրամները, խաղի կանոնները, գյուտերը:

6) արհեստական բանականությամբ ստեղծված ստեղծագործությունները:

ԳԼՈՒԽ 3
ՀԵՂԻՆԱԿԸ

Հոդված 4. Հեղինակը

1. Ստեղծագործության հեղինակն այն ֆիզիկական անձն է, ով ստեղծել է տվյալ մտավոր գործունեության արդյունքը:

Հոդված 5. Հեղինակության կանխավարկածը

1. Հեղինակ է ճանաչվում այն անձը, ում անունը որպես հեղինակ նշված է ստեղծագործության վրա կամ ստեղծագործությունը հրապարակելիս, քանի դեռ հակառակն ապացուցված չէ: Սույն դրույթը կիրառվում է նաև այն դեպքերում, երբ այդ անունը կեղծանուն կամ նշան է, և դրանով հանդես եկող հեղինակի անձը կասկած չի հարուցում:

2. Եթե հեղինակը հայտնի չէ, ապա ստեղծագործությունը հրապարակող անձը, ում անունը կամ անվանումը նշված է ստեղծագործությունը հրապարակելիս, այլ ապացույցների բացակայության դեպքում համարվում է հեղինակի ներկայացուցիչ և իրավասու է պաշտպանելու հեղինակի իրավունքներն ու ապահովելու դրանց իրականացումը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դրույթը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ այդպիսի ստեղծագործության հեղինակը չի բացահայտել իր անձը և չի հայտարարել իր հեղինակության մասին:

4. Հեղինակության ապացույցների պահպանման նպատակով, հեղինակը կարող է իր ստեղծագործությունն ի պահ հանձնել գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպությունում կամ օրենքով համապատասխան լիազորություն ունեցող այլ կազմակերպություններում:

5. Ստեղծագործությունն ի պահ հանձնող անձը պատասխանատու է հանձնած ստեղծագործության հեղինակության վերաբերյալ տեղեկությունների հավաստիության համար:

Հոդված 6. Հեղինակային իրավունքի ծագումը և դրա մասին ծանուցումը

1. Ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը ծագում է ստեղծագործության ստեղծման փաստի ուժով: Ստեղծագործությունը համարվում է ստեղծված, եթե այն արտահայտված է ընկալելու հնարավորություն թույլատրող որևէ օբյեկտիվ ձևով և կախված չէ այդ իրավունքի պաշտոնական հաստատագրումից, ստեղծագործության գրանցումից և որևէ այլ գործողության կատարումից:

2. Հեղինակային իրավունքի մասին ծանուցելու նպատակով գույքային իրավունքները տիրապետող հեղինակը կամ օրենքով նման իրավունք ունեցող անձը կարող է օգտագործել հեղինակային իրավունքի պահպանության նշանը՝ իրեն նշելով որպես իրավատեր: Հեղինակային իրավունքի պահպանության նշանը զետեղվում է ստեղծագործության բնօրինակի կամ յուրաքանչյուր օրինակի վրա և կազմված է՝

1) շրջանագծի մեջ վերցված լատինական «C» տառից,

2) իրավատիրոջ անունից կամ անվանումից,

3) ստեղծագործության առաջին հրապարակման տարեթվից:

3. Հակառակ ապացույցների բացակայության դեպքում իրավատեր համարվում է սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն ծանուցման մեջ որպես իրավատեր նշված անձը:

Հոդված 7. Համահեղինակներ

1. Եթե երկու կամ ավելի անձանց համատեղ ստեղծագործական աշխատանքով ստեղծված ստեղծագործությունը կազմում է անբաժանելի ամբողջություն, այդպիսի ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը պատկանում է այդ անձանց համատեղ (համահեղինակներ):

2. Համահեղինակությամբ ստեղծված և անբաժանելի ամբողջականություն համարվող ստեղծագործության նկատմամբ իրավունքների կառավարումը պատկանում է բոլոր համահեղինակներին համատեղ: Ընդ որում համահեղինակներից ոչ մեկը չի կարող մերժել մյուս համահեղինակներին ստեղծագործության իրավունքների կառավարման համար, եթե չի ներկայացրել դրա կառավարման ոչ նպատակահարմարության մասին հիմնավոր պատճառաբանություն, կամ չի կարող կատարել այնպիսի գործողություններ, որոնք որևէ կերպ վնաս են հասցնում կամ կարող են վնաս հասցնել մյուս համահեղինակների շահերին:

3. Ստեղծագործության օգտագործումից ստացվող օգուտները համահեղինակների միջև բաշխվում են նրանց միջև կնքված պայմանագրին համապատասխան: Պայմանագրի բացակայության դեպքում բաշխումը կատարվում է ստեղծագործության ստեղծման գործում նրանցից յուրաքանչյուրի իրական ներդրմանը համապատասխան: Եթե հնարավոր չէ որոշել համահեղինակներից յուրաքանչյուրի իրական ներդրումը, ապա բաշխումը կատարվում է համահավասար:

Հոդված 8. Բաղադրյալ ստեղծագործությունը և դրա նկատմամբ իրավունքը

1. Եթե ընդհանուր օգտագործման նպատակով երկու կամ ավելի հեղինակներ միացնում են իրենց ստեղծագործությունները, որոնցից յուրաքանչյուրն ունի ինքնուրույն նշանակություն, ապա այդպիսի ստեղծագործությունը կոչվում է բաղադրյալ:

2.Ստեղծագործության առանձին մասը համարվում է ինքնուրույն նշանակություն ունեցող, եթե այն կարող է օգտագործվել ստեղծագործության մյուս մասերից անկախ:

3. Բաղադրյալ ստեղծագործության հեղինակներից յուրաքանչյուրն իրավունք ունի իր հայեցողությամբ օգտագործել ստեղծագործության իր կողմից ստեղծված

ինքնուրույն նշանակություն ունեցող մասը, եթե այլ բան նախատեսված չէ նրանց միջև կնքված պայմանագրով:

4. Բաղադրյալ ստեղծագործության նկատմամբ կիրառվում են 4-րդ հոդվածի դրույթները՝ այնքանով, որքանով կիրառելի են (mutatis mutandis):

Հոդված 9. Հեղինակային իրավունքի և սեփականության իրավունքի հարաբերակցությունը

1. Ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը գործում է անկախ այն նյութական օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքից, որում արտահայտված է ստեղծագործությունը:

2. Նյութական օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքի օտարումը, որում արտահայտված է ստեղծագործությունը, ինքնին չի նշանակում հեղինակային իրավունքի օտարում:

ԳԼՈՒԽ 4
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Հոդված 10. Հեղինակային իրավունքի բովանդակությունը

1. Հեղինակային իրավունքը հեղինակի անձնական ոչ գույքային և գույքային բացառիկ իրավունքներն են իր ստեղծագործության նկատմամբ:

Հոդված 11. Հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքները

1. Հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքներն ապահովում են ստեղծագործության նկատմամբ նրա մտավոր և անձնական կապերը:

2. Հեղինակին են պատկանում ստեղծագործության նկատմամբ հետևյալ անձնական ոչ գույքային իրավունքները՝

1) հեղինակության իրավունքը.

2) հեղինակի համբավի և արժանապատվության իրավունքը.

3) առաջին հրապարակման իրավունքը.

4) հետկանչի իրավունքը:

Հոդված 12. Հեղինակության և հեղինակի անվան իրավունքը

1. Հեղինակը բացառիկ իրավունք ունի ճանաչվելու որպես հեղինակ իր ստեղծագործության նկատմամբ և պահանջելու այդպիսի ճանաչումը՝ նշելով իր անունը կամ կեղծանունը լույսընծայված բոլոր օրինակների վրա կամ պահանջելու սովորական ձևով դրանց նշումը ստեղծագործության ցանկացած օգտագործման ժամանակ:

2. Հեղինակն իրավունք ունի օգտագործել կամ թույլատրել իր ստեղծագործության օգտագործումն իր անվամբ, կեղծանվամբ կամ անանուն:

Հոդված 13. Հեղինակի համբավի և արժանապատվության իրավունքը

1. Հեղինակը բացառիկ իրավունք ունի առարկելու իր ստեղծագործության ցանկացած աղավաղման (փոփոխության կամ խեղաթյուրման) կամ այլ վնաս հասցնող գործողության դեմ, ինչպես նաև այն գործողությունների, որոնք վնասում են կամ վնաս կհասցնեն նրա համբավին կամ արժանապատվությանը:

Հոդված 14. Առաջին հրապարակման իրավունքը

1. Ստեղծագործությունն առաջին անգամ հրապարակելու բացառիկ իրավունքը պատկանում է հեղինակին: Հեղինակն է որոշում երբ և ինչպես հրապարակել իր ստեղծագործությունն առաջին անգամ:

2. Մինչև ստեղծագործության առաջին հրապարակումը դրա բովանդակության վերաբերյալ տեղեկություններ տալու կամ ստեղծագործությունը նկարագրելու բացառիկ իրավունքը պատկանում է հեղինակին:

Հոդված 15. Հետկանչի իրավունքը

1. Հեղինակը բացառիկ իրավունք ունի իր ստեղծագործությունը հանել (հետ կանչել) քաղաքացիական շրջանառությունից, պայմանով, որ նա կհատուցի ստեղծագործությունն օգտագործելու իրավունք ունեցող անձանց պատճառած վնասները:

2. Հետկանչի իրավունքը չի կիրառվում համակարգչային ծրագրերի, տվյալների բազաների, տեսալսողական ստեղծագործությունների, կազմածո

ստեղծագործությունների, կոլեկտիվ ստեղծագործությունների և ծառայողական ստեղծագործությունների նկատմամբ:

Հոդված 16. Ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները

1. Գույքային իրավունքները ստեղծագործության օգտագործումից նյութական շահ ստանալու հեղինակի իրավունքներն են:

2. Հեղինակը բացառիկ իրավունք ունի օգտագործելու իր ստեղծագործությունը, ինչպես նաև թույլատրելու կամ արգելելու երրորդ անձանց դրա բնօրինակի կամ օրինակների օգտագործումը:

3. Սույն օրենքով պահպանվող ստեղծագործությունների հետ կապված ցանկացած գործողություն համարվում է օգտագործում:

4. Ստեղծագործության օգտագործումն օրինական է, եթե հեղինակը՝ սույն օրենքի համաձայն, փոխանցել է համապատասխան գույքային իրավունքը, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով կամ պայմանագրով:

5. Ստեղծագործության յուրաքանչյուր օգտագործման համար հեղինակն ունի վարձատրություն ստանալու իրավունք, եթե սույն օրենքով կամ նրա հետ կնքված պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Հոդված 17. Հեղինակի բացառիկ գույքային իրավունքները

1. Հեղինակին է պատկանում ստեղծագործության նյութականացված ձևով, ոչ նյութականացված ձևով, վերափոխված ձևով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող ցանկացած ձևով ու եղանակով օգտագործման բացառիկ իրավունքները:

2. Ստեղծագործության նյութականացված ձևով օգտագործումը ներառում է՝

1) վերարտադրության իրավունքը.

2) տարածման իրավունքը.

3) վարձույթով տալու իրավունքը.

4) փոխատվության իրավունքը:

3. Ստեղծագործության ոչ նյութականացված ձևով օգտագործումը (հանրությանը հաղորդումը) ներառում է՝

1) հրապարակային կատարման իրավունքը.

2) հանրությանը հաղորդելու իրավունքը հնչյունագրի կամ տեսագրության միջոցով.

3) հրապարակային ցուցադրման իրավունքը.

4) հեռարձակման իրավունքը.

5) վերահաղորդման իրավունքը.

6) երկրորդային հեռարձակման իրավունքը.

7) հանրությանը մատչելի դարձնելու իրավունքը:

4. Ստեղծագործության վերափոխված ձևով օգտագործումը ներառում է վերափոխման իրավունքը:

5. Ստեղծագործության հեղինակին է պատկանում նաև՝

1) կերպարվեստի ստեղծագործության վերավաճառքի իրավունքը.

2) կերպարվեստի ստեղծագործությունը հասանելի դարձնելու և ցուցադրելու իրավունքը:

Հոդված 18. Վերարտադրության իրավունքը

1. Հեղինակը բացառիկ իրավունք ունի թույլատրելու կամ արգելելու իր ստեղծագործության մեկ կամ մի քանի օրինակների ուղղակի կամ անուղղակի, ժամանակավոր կամ մշտական ամրագրումը նյութական կրիչի վրա, ցանկացած ձևով և միջոցներով, ամբողջությամբ կամ մասնակի, ներառյալ՝ էլեկտրոնային ձևով պահպանումը:

2. Սույն հոդվածի 1-ին մասի իմաստով վերարտադրությունը ներառում է մասնավորապես՝ գրաֆիկական, լուսանկարչական վերարտադրությունը, տեսաձայնային ամրագրումը, կաղապարով կամ այլ ձևով եռաչափ վերարտադրությունը, նախագծի հիման վրա ճարտարապետական կառույցի իրականացումը, թվային վերարտադրությունը:

Հոդված 19. Տարածման իրավունքը

1. Հեղինակը բացառիկ իրավունք ունի թույլատրելու կամ արգելելու իր ստեղծագործության բնօրինակը կամ օրինակները քաղաքացիական շրջանառության

մեջ դնելը վաճառքի կամ սեփականության իրավունքի փոխանցման այլ ձևերով, ինչպես նաև դրանց ներմուծումը:

2. Տարածում է համարվում նաև ստեղծագործության բնօրինակը կամ օրինակները սույն հոդվածի 1-ին մասի նպատակով հանրությանն առաջարկելը:

3. Հեղինակն իրավունք չունի արգելելու երրորդ անձանց կողմից ստեղծագործության բնօրինակի կամ օրինակների տարածումը Հայաստանի Հանրապետությունում, եթե դրանք հեղինակի կողմից կամ նրա համաձայնությամբ քաղաքացիական շրջանառության մեջ են դրվել Հայաստանի Հանրապետությունում կամ այլ երկրում, որի հետ գործում է ընդհանուր շուկայի կամ ընդհանուր մաքսային սահմանի մասին Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիր:

Հոդված 20. Վարձույթով տալու իրավունքը

1. Հեղինակը բացառիկ իրավունք ունի թույլատրելու կամ արգելելու իր ստեղծագործության բնօրինակի կամ օրինակների օգտագործման տրամադրումը որոշակի ժամանակահատվածով, ուղղակի կամ անուղղակի առևտրային օգուտ ստանալու նպատակով:

2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթը չի տարածվում կառուցված ճարտարապետական օբյեկտների և կիրառական արվեստի ստեղծագործությունների վրա:

Հոդված 21. Փոխատվության իրավունքը

1. Հեղինակը բացառիկ իրավունք ունի թույլատրելու կամ արգելելու իր ստեղծագործության բնօրինակի կամ օրինակների սահմանափակ ժամանակահատվածով օգտագործման տրամադրումը հանրության այցելության համար ազատ հաստատությունների միջոցով՝ առանց ուղղակի կամ անուղղակի առևտրային օգուտ ստանալու:

2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթը չի տարածվում կառուցված ճարտարապետական օբյեկտների և կիրառական արվեստի ստեղծագործությունների վրա:

Հոդված 22. Հրապարակային կատարման իրավունքը

1. Հեղինակը բացառիկ իրավունք ունի թույլատրելու կամ արգելելու՝

1) իր գրական ստեղծագործության ասմունքը կենդանի կատարման միջոցով,

2) իր երաժշտական ստեղծագործության հրապարակային կատարումը կենդանի կատարման միջոցով,

3) իր ստեղծագործության ներկայացումը բեմի վրա կենդանի կատարման միջոցով:

2. Հեղինակը բացառիկ իրավունք ունի թույլատրելու կամ արգելելու սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ասմունքի և ներկայացումների հաղորդումը հանրությանը՝ կատարման կամ գտնվելու վայրի սահմաններից դուրս՝ բարձրախոսի, էկրանի կամ նմանատիպ տեխնիկական սարքերի միջոցով:

Հոդված 23. Հանրությանը հաղորդելու իրավունքը ինչյունագրի կամ տեսագրության միջոցով

1. Հեղինակը բացառիկ իրավունք ունի թույլատրելու կամ արգելելու ինչյունագրում կամ տեսագրության մեջ ամրագրված իր ստեղծագործության հաղորդումը հանրությանը:

Հոդված 24. Հրապարակային ցուցադրման իրավունքը

1. Հեղինակը բացառիկ իրավունք ունի թույլատրելու կամ արգելելու տեխնիկական սարքերի օգնությամբ տեսալսողական, լուսանկարչական, կերպարվեստի, ճարտարապետական, գիտական կամ տեխնիկական բնույթի ստեղծագործության ցուցադրումը հանրությանը:

Հոդված 25. Հեռարձակման իրավունքը

1. Հեղինակը բացառիկ իրավունք ունի թույլատրելու կամ արգելելու իր ստեղծագործության հեռարձակումը:

2. Հեռարձակում է համարվում հանրության ընկալման համար (նախատեսված) էլեկտրամագնիսական ալիքների միջոցով հաղորդումներ կրող ազդանշանների հաղորդումը առանց հաղորդալարի (այդ թվում՝ արբանյակային հեռարձակումը), ինչպես նաև հաղորդալարով (այդ թվում՝ մալուխով վերահաղորդումը):

3. Սույն օրենքի իմաստով արբանյակային կապով հեռարձակումը հեռարձակող կազմակերպության հսկողությամբ և պատասխանատվությամբ հանրության համար նախատեսված հաղորդումներ պարունակող ազդանշանների հաղորդումն է չընդհատվող շղթայով արբանյակ և հետ՝ երկիր:

4. Կոդավորված ազդանշաններով իրականացվող հեռարձակումը արբանյակային կապով հեռարձակումն է, եթե դրա ապակոդավորման միջոցները հանրությանը տրամադրվել են հեռարձակող կազմակերպության կողմից կամ նրա համաձայնությամբ:

5. Սույն օրենքի իմաստով արբանյակը ցանկացած արբանյակ է, որը գործում է հաճախության այնպիսի տիրույթներում, որոնք՝

1) հեռահաղորդակցության օրենսդությամբ նախատեսված են ազդանշանները հասարակությանը հասանելի դարձնելու համար, կամ

2) նախատեսված են փակ հաղորդման համար մի կետից դեպի մյուսը, պայմանով, որ ազդանշանների անհատական ձևով ընդունման պայմանները համարժեք են սույն մասի 1-ին կետում նշված պայմաններին:

Հոդված 26. Վերահաղորդման իրավունքը

1. Հեղինակը բացառիկ իրավունք ունի թույլատրելու կամ արգելելու իր ստեղծագործության վերահաղորդումը:

2. Վերահաղորդում է համարվում հաղորդման համաժամանակյա կամ գրեթե համաժամանակյա, չփոփոխված և ամբողջական վերահաղորդումը հանրությանը, որն իրականացվում է՝

1) այլ հեռարձակող կազմակերպության կողմից (այսուհետ՝ վերահեռարձակում).

2) ցանցային օպերատորի կողմից՝ մալուխային կամ այլ ցանցի միջոցով:

Հոդված 27. Երկրորդային հեռարձակման իրավունք

1. Հեղինակը բացառիկ իրավունք ունի թույլատրելու կամ արգելելու իր ստեղծագործության հեռարձակման հաղորդումը հանրությանը բարձրախոսի, էկրանի կամ նմանատիպ սարքերի միջոցով:

Հոդված 28. Մատչելի դարձնելու իրավունքը

1. Հեղինակը բացառիկ իրավունք ունի թույլատրելու կամ արգելելու իր ստեղծագործությունը հանրությանը մատչելի դարձնելը հաղորդալարով կամ առանց հաղորդալարի այնպիսի ձևով, որ այն հասանելի լինի հանրության անդամներին նրանց կողմից անհատապես ընտրված ցանկացած վայրում և պահին, մասնավորապես համակարգչային կամ նմանատիպ ցանցերի միջոցով:

Հոդված 29. Վերափոխման իրավունքը

1. Հեղինակը բացառիկ իրավունք ունի թույլատրելու կամ արգելելու իր ստեղծագործության վերափոխումը բեմականացման նպատակով, երաժշտական մշակումը, թարգմանությունը, փոփոխությունը և այլ հարմարեցումները:

2 Սույն հոդվածի 1-ին մասում նշված ցանկացած ստեղծագործության պահպանությունը չպետք է վնաս հասցնի դրա մեջ ներառված կամ օգտագործված արդեն գոյություն ունեցող ստեղծագործության պահպանությանը:

Հոդված 30. Կերպարվեստի ստեղծագործության վերավաճառքի իրավունքը

1. Կերպարվեստի ստեղծագործության հեղինակը կամ նրա իրավահաջորդը օգտվում է իր կողմից օտարված կերպարվեստի ստեղծագործության բնօրինակը սեփականատիրոջ կողմից կամ մշակութային աճուրդի տան, պատկերասրահի, գեղարվեստական սրահի, խանութի կամ որևէ արվեստի գործակալի միջոցով վերավաճառքի մասին տեղեկացվելու և յուրաքանչյուր վերավաճառքի գնի հինգ տոկոսը վաճառողից ստանալու իրավունքից (վերավաճառքի իրավունք): Վերավաճառքի իրավունքը անօտարելի է հեղինակի կյանքի ընթացքում, անցնում է ժառանգաբար և գործում է մինչև գույքային իրավունքների գործողության ժամկետի ավարտը:

2. Կերպարվեստի ստեղծագործության բնօրինակը վաճառողները, գնորդները և

միջնորդները համատեղ պատասխանատու են սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պարտավորությունների համար: Կերպարվեստի ստեղծագործության բնօրինակի սեփականատերը, մշակութային աճուրդի տունը, պատկերասրահը, գեղարվեստական սրահը, խանութը կամ արվեստի գործակալը վերավաճառքից հետո՝ 30 օրվա ընթացքում, հեղինակին կամ նրա ներկայացուցչին տեղեկություններ է ներկայացնում վաճառված բնօրինակի, վաճառքի գնի և վաճառողի մասին՝ պայմանագրով սահմանված եղանակով:

3. Վերավաճառքի իրավունքը չի կիրառվում, եթե վաճառողը բնօրինակը ձեռք է բերել անմիջապես հեղինակից՝ վերավաճառքից ոչ ավելի, քան երեք տարի առաջ, ինչպես նաև այն դեպքում, եթե վերավաճառքի գինը չի գերազանցում 250.000 ՀՀ դրամը:

4. Սույն օրենքի իմաստով կերպարվեստի ստեղծագործության բնօրինակներ են համարվում գեղանկարները, կոլաժները, գծանկարները, փորագրությունները, նկարազարդ գորգերը, քանդակները, լիտոգրաֆիական, կերամիկական, ապակեգործական, լուսանկարչական, ոսկերչական և նմանատիպ այլ ստեղծագործությունները, պայմանով, որ դրանք պատրաստված են հեղինակի կողմից կամ բնօրինակ համարվող օրինակներ են:

5. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարձատրության վճարումը հեղինակին կամ նրա իրավահաջորդին իրականացվում է գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպության միջոցով:

6. Սույն հոդվածի 1-ին մասում նշված իրավունքից օգտվում են օտարերկրյա պետությունների քաղաքացիները՝ փոխադարձության սկզբունքով:

Հոդված 31. Կերպարվեստի ստեղծագործությունը հասանելի դարձնելու և ցուցադրելու իրավունքը

1. Հեղինակն իրավունք ունի ստեղծագործության բնօրինակի սեփականատիրոջից պահանջելու վերարտադրման կամ վերամշակման իր իրավունքն իրագործելու հնարավորություն ընձեռել իրեն, եթե դրանով չեն վնասվում սեփականատիրոջ օրինական շահերը: Սեփականատերը պարտավոր չէ ստեղծագործությունը հասցնել հեղինակի գտնվելու վայրը:

2. Հեղինակը կարող է պահանջել, որ սեփականատերը կերպարվեստի իր ստեղծագործության կամ լուսանկարչական ստեղծագործության բնօրինակը տրամադրի իրեն՝ այն ցուցահանդեսում ցուցադրելու նպատակով:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն ցուցահանդեսում ցուցադրելու հնարավորությունն ընձեռելիս սեփականատերը կարող է հեղինակից պահանջել ստեղծագործության պահպանության բավարար անվտանգության միջոցներ կամ բնօրինակի շուկայական գնի չափով գրավի ապահովում:

4. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավունքից օգտվելու համար անհրաժեշտ ծախսերը կրում է հեղինակը, ով պատասխանատվություն է կրում նաև ստեղծագործության բնօրինակին կամ օրինակին պատճառած հնարավոր վնասի համար:

5. Դիմանկար պարունակող կերպարվեստի ստեղծագործությունների ստեղծումն ու տարածումը իրականացվում է միայն դիմանկարում պատկերված անձի համաձայնությամբ:

ԳԼՈՒԽ 5
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

Հոդված 32. Սահմանափակումների կիրառումը

1. Սույն օրենքով նախատեսված իրավունքների սահմանափակումները կարող են կիրառվել կոնկրետ սահմանափակման նպատակն ապահովող ծավալով, ինչպես նաև հեղինակի անվան և ստեղծագործության սկզբնաղբյուրի նշումով, եթե նման նշումն անհնարին չէ: Սահմանափակումները կիրառվում են պայմանով, որ չեն հակասում ստեղծագործության բնականոն օգտագործման պահանջներին և անհիմն կերպով չեն վնասում ստեղծագործության նկատմամբ հեղինակի օրինական շահերը:

2. Ստեղծագործությունն օգտագործելու հեղինակի և այլ անձանց գույքային իրավունքների սահմանափակում թույլատրվում է միայն օրենքով նախատեսված դեպքերում:

Հոդված 33. Ստեղծագործության օգտագործումը տեղեկատվության նպատակներով

1. Տեղեկատվության նպատակներով և տեղեկատվության նպատակն արդարացնող ծավալով, առանց հեղինակի համաձայնության և վարձատրության թույլատրվում է՝

1) ստեղծագործության օգտագործումն ընթացիկ իրադարձությունների մասին հաղորդման ժամանակ.

2) քաղաքական ելույթների, ուղերձների, քարոզների, ինչպես նաև հրապարակավ արտասանված դասախոսություններից կամ նմանատիպ այլ ստեղծագործություններից քաղվածքների օգտագործումը:

Հոդված 34. Լրատվական նյութի օգտագործումը

1. Տեղեկատվության նպատակներով, առանց հեղինակի համաձայնության և վարձատրության թույլատրվում է վերարտադրել տպագիր լրատվական միջոցների, էլեկտրոնային կայքերի (ցանցային լրատվության միջոց) լրատվական նյութերից քաղվածքներ այլ տպագիր լրատվական միջոցներում, ինտերնետային կայքերում: Անկախ վերարտադրության ծավալից՝ լրատվական նյութերից քաղվածքների վերարտադրությունը չպետք է բացահայտի լրատվական նյութի էական մասը: Վերարտադրությունը պետք է բացառի լրատվական նյութի սկզբնաղբյուրի հնարավոր ընթերցողների քանակի և լրատվական նյութի օգտագործման ծավալների վրա բացասական ազդեցությունը: Լրատվական նյութը ամբողջությամբ կարող է վերարտադրվել միայն հեղինակի համաձայնությամբ: Լրատվական նյութի ամբողջական վերարտադրության կարգն ու պայմանները սահմանվում են կողմերի միջև կնքված պայմանագրով:

2. Տպագիր լրատվական միջոցներում, էլեկտրոնային կայքերում այլ տպագիր լրատվական միջոցների, էլեկտրոնային կայքերի լրատվական նյութերից քաղվածքներ վերարտադրելիս պետք է հղում կատարել լրատվական նյութի սկզբնաղբյուրին: Էլեկտրոնային կայքում տպագիր լրատվական միջոցների կայքերի լրատվական նյութերից քաղվածքներ վերարտադրելիս քաղվածքի վերնագրում տպագիր լրատվական միջոցի անվանման նշումը պարտադիր է, եթե քաղվածքի նպատակը միայն սկզբնաղբյուր լրատվական նյութի վերարտադրությունն է: Էլեկտրոնային կայքերի լրատվական նյութերից քաղվածքներ վերարտադրելիս

էլեկտրոնային կայքի ակտիվ հղման տեղադրումը, ինչպես նաև քաղվածքի վերնագրում էլեկտրոնային կայքի տիրույթային անվանման (դոմեյնի անվանումը) նշումը պարտադիր է, եթե քաղվածքի նպատակը միայն սկզբնաղբյուր լրատվական նյութի վերարտադրությունն է:

3. Հեռարձակող կազմակերպության այն հաղորդումները, որոնք իրենց բնույթով ուղղված են մամուլի տեսությունը ներկայացնելուն, պարտավոր են պահպանել սույն հոդվածով նախատեսված դրույթները:

Հոդված 35. Ստեղծագործության օգտագործումն ուսումնական և գիտական նպատակներով

1. Առանց հեղինակի համաձայնության և վարձատրության, ստեղծագործության օգտագործումը համարվում է օրինական, եթե դա իրականացվում է՝

1) բացառապես ուսումնական կամ գիտական հետազոտությունների լուսաբանման նպատակով,

2) ուսումնական հաստատության պատասխանատվության ներքո՝ դրա տարածքում կամ այլ վայրերում կամ ապահով էլեկտրոնային ցանցերի միջոցով, որոնք հասանելի են միայն ուսումնական հաստատության աշակերտներին կամ ուսանողներին և դասախոսական կազմին:

2. Սույն հոդվածի 1-ին մասի իմաստով ստեղծագործություններ են համարվում հրապարակված ստեղծագործությունների մասերը, ինչպես նաև լուսանկարչական, կերպարվեստի, ճարտարապետության, կիրառական արվեստի և քարտեզագրության ամբողջական ստեղծագործությունները, որոնք որպես իլյուստրացիաներ վերարտադրվել ու ադապտացվել են դասագրքերում, հաղորդումներում, ինչյունագրերում, տեսագրություններում և նմանատիպ արտադրանքներում:

3. Սույն հոդվածով նախատեսված սահմանափակումները վերաբերում են նաև՝

1) ստեղծագործությունների հրապարակային կատարմանը՝ լսարանային պարապմունքների շրջանակներում,

2) ստեղծագործությունների հաղորդմանը հանրությանը հնչյունագրերի և տեսագրությունների միջոցով, հրապարակային ցուցադրմանը և երկրորդային հեռարձակմանը՝ բոլորը լսարանային պարապմունքների շրջանակներում,

3) ստեղծագործության հրապարակային կատարմանը՝ առանց մուտքի վճարների, դպրոցական միջոցառումների ժամանակ, պայմանով, որ կատարողները չեն վարձատրվում իրենց կատարման համար:

4. Սույն հոդվածի իմաստով ուսուցում կամ գիտական հետազոտություն է համարվում տարբեր մակարդակների ուսումնական հաստատությունների կողմից իրականացվող գործունեությունը, այդ թվում՝ քննությունները, և ներառում է նաև լսարանային, մասնակի բեռնվածությամբ, հեռավար ուսումնառությունը կամ առցանց հետազոտությունը:

Հոդված 36. Ստեղծագործությունների հանրային օգտագործումը

1. Գրադարանները, ուսումնական հաստատությունները, թանգարանները, արխիվները, ֆիլմադարանները և ձայնադարանները (այսուհետ նաև՝ հանրային օգտագործողներ), հանրային շահերից բխող իրենց առաքելության և խնդիրների իրագործման նպատակով, պահպանության կամ վերականգնման նպատակներով կարող են վերարտադրել ստեղծագործությունների բնօրինակները կամ օրինակները, որոնք մշտապես գտնվում են իրենց հավաքածուներում:

2. Հանրային օգտագործողները, օրինական հրապարակված ստեղծագործության իրենց օրինակի օգտագործմամբ, ազատ կարող են՝

1) վերարտադրել ստեղծագործությունը ցանկացած կրիչի վրա մեկ օրինակից ոչ ավելի՝ պահուստային օրինակի կամ ներքին օգտագործման այլ հատուկ գործողությունների համար՝ պայմանով, որ դա չի իրականացվում ուղղակի կամ անուղղակի առևտրային օգուտ ստանալու համար.

2) կատալոգում համակարգելու նպատակով վերարտադրել ստեղծագործության վերնագիրը և համառոտ շարադրանքը ցանկացած կրիչի վրա և օգտագործել.

3) հետազոտության կամ մասնավոր ուսումնասիրության նպատակով՝ իրենց տարածքներում տեղադրված ապահով էլեկտրոնային ցանցերի միջոցով, հանրության առանձին անդամներին մատչելի դարձնել կամ հաղորդել իրենց հավաքածուներում պարունակվող այն ստեղծագործությունները, որոնք հնարավոր չէ ձեռք բերել կամ դրանց օգտագործման համար ստանալ համապատասխան թույլտվություն:

3. Առանց հեղինակի համաձայնության գրադարանները կարող են ստեղծագործությունների օրինակները միմյանց տրամադրել փոստով, ֆաքսիմիլային կամ էլեկտրոնային փոխանցման հնարավոր բոլոր անվտանգ միջոցներով, որոնք ապահովում են տվյալների ծածկագրումը և նույնականացված հասանելիությունը՝ բացառելով երրորդ անձանց կողմից տեղեկատվության որևէ անօրինական որսում, արտահոսք կամ հետագա չարտոնված վերարտադրություն ու տարածում

Հոդված 37. Ստեղծագործության վերարտադրության ժամանակավոր գործողությունները

1. Առանց հեղինակի համաձայնության և վարձատրության թույլատրվում է իրականացնել ստեղծագործության վերարտադրության կարճատև կամ հազվադեպ՝ ժամանակավոր գործողություններ, որոնք ինքնուրույն տնտեսական նշանակություն չունեն և տեխնոլոգիական գործընթացի անքակտելի և էական մասն են կազմում, որոնց նպատակն է՝

1) միջնորդի միջոցով երրորդ անձանց միջև ցանցում ստեղծագործության տարածումը.

2) ստեղծագործության օրինական օգտագործումը:

Հոդված 38. Ստեղծագործության վերարտադրությունը անձնական նպատակով

1. Առանց հեղինակի համաձայնության և վարձատրության թույլատրվում է հրապարակված ստեղծագործության վերարտադրությունը թղթային կամ նմանատիպ ցանկացած այլ կրիչի վրա լուսապատճենման կամ տեխնիկական այլ եղանակներով՝ պայմանով, որ դա օգտագործվում է բացառապես անձնական նպատակով և չի իրականացվում ուղղակի կամ անուղղակի առևտրային օգուտ ստանալու համար:

2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթը չի տարածվում շինությունների և համանման կառույցների տեսքով ճարտարապետական ստեղծագործությունների, մեքենայաընթեռնելի տվյալների բազաների կամ դրանց էական մասերի, համակարգչային ծրագրերի, ինչպես նաև ամբողջական գրքերի, տպագրված

նոտային տեքստերի արտատպման եղանակով վերարտադրության վրա, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

3. Ամբողջական գրքի մեկ օրինակի վերարտադրությունը թույլատրվում է, եթե այդպիսի ստեղծագործությունը քաղաքացիական շրջանառությունից դուրս է եկել:

4. Սույն հոդվածի 3-րդ մասի իմաստով ստեղծագործությունը համարվում է «քաղաքացիական շրջանառությունից դուրս եկած», եթե իր բոլոր տարբերակներով ու ձևերով որպես ամբողջական ստեղծագործություն այլևս հասանելի չէ սովորական առևտրային ցանցում՝ անկախ գրադարաններում և հանրության շրջանում այդ ստեղծագործության օրինակների առկայությունից:

Հոդված 39. Հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ստեղծագործության օգտագործման առանձնահատկությունները

1. Առանց հեղինակի համաձայնության և վարձատրության թույլատրվում է կույր, տեսողության կամ լսողության խնդիրներով հաշմանդամություն կամ ընթերցողության ֆունկցիայի այլ դժվարություններ ունեցող անձանց (այսուհետ՝ հաշմանդամություն ունեցող անձ) և լիազորված հաստատություններին պատրաստել հրապարակված ստեղծագործության մատչելի ձևաչափով օրինակ և տրամադրել այն հաշմանդամություն ունեցող անձանց՝ բացառապես օգտագործելու նպատակով, պայմանով, որ՝

1) ստեղծագործությունը կամ դրա օրինակն օրինական ճանապարհով հասանելի է հաշմանդամություն ունեցող անձին և լիազորված հաստատությանը,

2) պահպանվել է ստեղծագործության ամբողջականությունը, բացառությամբ այն փոփոխություններից, որոնք անհրաժեշտ են ստեղծագործությունը հաշմանդամություն ունեցող անձանց այլ ձևաչափով հասանելի դարձնելու համար,

3) գործունեությունն իրականացվում է առանց շահույթ ստանալու նպատակ հետապնդելու:

2. Հաշմանդամություն ունեցող անձը, ում սույն հոդվածի 1-ին մասի համաձայն տրամադրվել է ստեղծագործությունը, առանց հեղինակի թույլտվության կարող է այն վերարտադրել անձնական, ոչ առևտրային օգտագործման նպատակով:

3. Սույն հոդվածի 1-ին մասի համաձայն լիազորված հաստատություններ են համարվում Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված, իրավասու կամ ճանաչված այն հաստատությունները, որոնք հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրում են կրթություն, ուսումնական վերապատրաստում, հարմարեցված ընթերցանություն կամ տեղեկատվության հասանելիություն ոչ առևտրային հիմունքներով: Լիազորված հաստատություններ համարվում են նաև պետական հաստատությունները կամ ոչ առևտրային կազմակերպությունները, որոնք որպես իրենց հիմնական գործունեություն, կամ ինստիտուցիոնալ պարտավորություն շահառուներին տրամադրում են նույն ծառայությունները:

4. Լիազորված հաստատությունը կարող է սույն օրենքին համապատասխան ստեղծագործության մատչելի ձևաչափով պատրաստված օրինակը արտահանել (տարածել, հաղորդել կամ մատչելի դարձնել) «Կույրերի, տեսողությունից հաշմանդամություն ունեցող կամ ընթերցողության ֆունկցիայի այլ դժվարություններ ունեցող անձանց համար հրատարակված ստեղծագործությունների մատչելիությունը դյուրացնելու մասին» Մարաքեշի պայմանագրի (այսուհետ՝ Մարաքեշի պայմանագիր) կողմ հանդիսացող երկրների շահառուներին կամ լիազորված հաստատություններին:

5. Հաշմանդամություն ունեցող անձը կամ լիազորված անձը կարող է ներմուծել կամ այլ կերպ ձեռք բերել կամ հասանելի դարձնել և հետագայում օգտագործել սույն օրենքին համապատասխան ստեղծագործության մատչելի ձևաչափով օրինակը, որը Մարաքեշի պայմանագրի կողմ հանդիսացող այլ երկրի լիազորված հաստատության կողմից տարածվել, փոխանցվել կամ մատչելի է դարձել հաշմանդամություն ունեցող անձանց կամ լիազորված հաստատություններին:

6. Սույն օրենքի իմաստով «մատչելի ձևաչափով օրինակ» նշանակում է՝ ստեղծագործության օրինակն այլընտրանքային եղանակով կամ ձևով, որն ապահովում է շահառուի համար ստեղծագործության հասանելիությունը, ներառյալ՝ թույլ է տալիս նրան ունենալ նույնքան դյուրին և հարմարավետ հասանելիություն, որքան այն անձին, ով չունի տեսողությունից հաշմանդամություն կամ այլ տպագիր ստեղծագործություններին հասանելիություն ունենալու դժվարություններ: Մատչելի ձևաչափով օրինակն օգտագործվում է բացառապես շահառուների կողմից, և այն

պետք է պահպանի բնօրինակ ստեղծագործության ամբողջականությունը՝ պատշաճ կերպով հաշվի առնելով այլընտրանքային ձևաչափով ստեղծագործությունը մատչելի դարձնելու համար անհրաժեշտ փոփոխությունները և շահառուների համար մատչելիության կարիքները:

Հոդված 40. Ստեղծագործություններից մեջբերումները

1. Գիտական, հետազոտական, բանավիճային, քննադատական կամ տեղեկատվության նպատակով օրինական ճանապարհով հրապարակված ստեղծագործություններից մեջբերումը (ցիտումը)՝ սահմանափակ ծավալով կարող է ազատ օգտագործվել այլ ստեղծագործության մեջ:

Հոդված 41. Ստեղծագործության օգտագործումը վարույթների նպատակով

1. Ստեղծագործությունը կարող է ազատ օգտագործվել վարչական, դատական կամ արբիտրաժային վարույթները ապահովելու, ինչպես նաև վարույթը լուսաբանելու նպատակով:

Հոդված 42. Ստեղծագործության օգտագործումը պաշտոնական և կրոնական արարողությունների ժամանակ

1. Հրապարակված ստեղծագործությունները կարող են ազատ հաղորդվել հանրությանը պետական մարմնի կողմից կազմակերպված պաշտոնական հանդիսությունների կամ կրոնական ծիսակատարությունների ժամանակ:

Հոդված 43. Այցելության համար բաց վայրերում տեղակայված ստեղծագործությունների օգտագործումը

1. Փողոցներում, զբոսայգիներում, հրապարակներում կամ այցելության համար բաց այլ վայրերում մշտապես տեղակայված ստեղծագործությունները կարող են ազատ վերարտադրվել ցանկացած կրիչի վրա, ցանկացած միջոցներով և ձևերով, հեռարձակվել, ինչպես նաև վերարտադրված օրինակները տարածվել, մատչելի դարձվել համացանցի միջոցով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ստեղծագործությունները չեն կարող

վերարտադրվել եռաչափ ծավալատարածական այն ձևով, որն ունի բնօրինակ ստեղծագործությունը:

Հոդված 44. Լրացուցիչ մաս պարունակող ստեղծագործությունների օգտագործումը

1. Հրապարակված ստեղծագործությունները, որոնք այլ նյութում ներառված են որպես լրացուցիչ մաս և այդ նյութի համար որևէ նշանակություն չունեն, կարող են ազատ օգտագործվել տվյալ նյութի շահագործման ժամանակ:

Հոդված 45. Արվեստի ստեղծագործությունների օգտագործումը կատալոգներում

1. Արվեստի ստեղծագործությունների հրապարակային ցուցահանդես կամ մշակութային աճուրդ կազմակերպող անձը միջոցառումը գովազդելու նպատակով կարող է ազատ օգտագործել այդ ստեղծագործությունները աճուրդի վերաբերյալ տեղեկատվական թերթիկում՝ միջոցառումը խթանելու նպատակով՝ բացառելով ցանկացած այլ առևտրային օգտագործումը:

Հոդված 46. Ստեղծագործության ազատ վերափոխումը

1. Ստեղծագործությունը կարող է ազատ վերափոխվել և օգտագործվել՝ պայմանով, որ վերափոխումը՝

1) իրականացվում է անձնական նպատակով և հասանելի կամ մատչելի չէ հանրության համար.

2) իրականացվում է ծաղրանկար, պարոդիա (ծաղրագրություն) ստեղծելու նպատակով, պայմանով, որ շփոթություն չի առաջացնի ստեղծագործության բնագրի նկատմամբ:

Հոդված 47. Սարքավորումների ցուցադրումը և վերանորոգումը

1. Արհեստանոցները և խանութները, որոնք վաճառում են հնչյունագրեր, տեսագրություններ, կամ վերանորոգում են դրանց օգտագործման կամ ընկալման

համար նախատեսված սարքավորումներ, կարող են ցուցադրման կամ վերանորոգման նպատակով ազատ վերարտադրել ստեղծագործությունները և դրանք հաղորդել հանրությանը:

Հոդված 48. Տվյալների բազաների ազատ օգտագործումը

1. Հրապարակված տվյալների բազայի կամ դրա օրինակի օրինական օգտագործողը կարող է ազատ օգտագործել այդ տվյալների բազան, եթե դա անհրաժեշտ է դրա պարունակության հասանելիության և բնականոն օգտագործման համար: Եթե տվյալների բազայի օրինական օգտագործողը լիազորված է օգտագործել տվյալների բազայի միայն մի մասը, ապա սույն դրույթը կիրառվում է միայն այդ մասի նկատմամբ:

Հոդված 49. Կարճատև օգտագործման համար ձայնագրության կամ տեսագրության պատրաստումը և ազատ օգտագործումը հեռարձակող կազմակերպության կողմից

1. Ստեղծագործության հեռարձակման իրավունքի փոխանցումը ենթադրում է, որ հեռարձակող կազմակերպությանն է փոխանցվել նաև՝

1) տվյալ ստեղծագործության կարճատև օգտագործման ձայնագրություն կամ տեսագրություն կատարելու իրավունքը, պայմանով, որ հեռարձակող կազմակերպությունն այդ ձայնագրությունը կամ տեսագրությունը կատարում է իր տեխնիկական միջոցներով և իր սեփական հաղորդումների համար:

2. Հեռարձակող կազմակերպությունը պարտավոր է նման ձայնագրության կամ տեսագրության ստեղծումից 6 ամիս անց ոչնչացնել այն, եթե այդ կարճատև օգտագործման ձայնագրության կամ տեսագրության հետագա օգտագործումը համաձայնեցված չէ ստեղծագործության հեղինակի հետ:

3. Կարճատև օգտագործման ձայնագրությունը կամ տեսագրությունն առանց ստեղծագործության հեղինակի համաձայնության կարող է պահպանվել պաշտոնական արխիվներում, եթե դա բացառապես վավերագրական բնույթի է:

Հոդված 50. Ճարտարապետական կառույցի վերափոխումը

1. Ճարտարապետական ստեղծագործություն հանդիսացող կամ այդպիսի ստեղծագործություն պարունակող շենքի կամ շինության սեփականատերը կարող է օրենքով սահմանված կարգով փոփոխություն կատարել շենքի կամ շինության մեջ, վերակառուցել կամ քանդել այն, եթե տվյալ շենքի կամ շինության նախագծի հեղինակի և նախագիծը պատվիրողի միջև կնքված պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

2. Սույն հոդվածի 1-ին մասը չի տարածվում որպես պատմամշակութային անշարժ հուշարձան պետության կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սահմանված կարգով պահպանվող համալիրների, շենքերի, շինությունների, քանդակների, զարդաքանդակների, նախշերի և որմնանկարների վրա:

3. Ճարտարապետության, քաղաքաշինության, այգեպուրակային արվեստի ստեղծագործության հեղինակներն առաջնահերթ իրավունք ունեն մասնակցելու դրանց գործնական իրականացմանը, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված փոփոխությունների կատարմանը, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Հոդված 51. Կերպարվեստի ստեղծագործության բնօրինակի պահպանությունը

1. Եթե կերպարվեստի ստեղծագործության բնօրինակի սեփականատերը ցանկանում է ոչնչացնել նշված բնօրինակը, պարտավոր է ինքնարժեքով դա առաջարկել հեղինակին: Ինքնարժեքն իր մեջ ներառում է ստեղծագործության բնօրինակի ստեղծման համար կատարված բոլոր ծախսերը:

2. Եթե կերպարվեստի ստեղծագործության բնօրինակը վերադարձնելն անհնար է, ապա սեփականատերը պարտավոր է հնարավորություն տալ հեղինակին՝ ստեղծելու ստեղծագործության պատճենը:

ԳԼՈՒԽ 6

ՏԻՐԱԶՈՒՐԿ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 52. Տիրազուրկ ստեղծագործությունը

1. Սույն օրենքի իմաստով ստեղծագործությունը համարվում է տիրազուրկ, եթե այդ ստեղծագործության իրավատերերից ոչ մեկը չի նույնականացվել, կամ, եթե նույնիսկ նրանցից մեկը կամ մի քանիսը նույնականացվել են, սակայն նրանցից ոչ մեկը չի հայտնաբերվել, թեև նրանց հայտնաբերման համար սույն օրենքին համապատասխան իրականացվել և արձանագրվել են պատշաճ որոնողական աշխատանքներ:

2. Եթե պահպանվող ստեղծագործությունն ունի մեկից ավելի իրավատեր և նրանցից ոչ բոլորն են նույնականացվել, կամ, եթե նույնիսկ նույնականացվել են, կամ իրականացված ու արձանագրված պատշաճ որոնողական աշխատանքների արդյունքում պարզվել է նրանց գտնվելու վայրը, ապա պահպանվող ստեղծագործությունը կարող է օգտագործվել որպես տիրազուրկ ստեղծագործություն՝ պայմանով, որ իրավատերերը, որոնք նույնականացվել են կամ պարզվել է նրանց գտնվելու վայրը, իրենց իրավունքների մասով թույլտվություն են տվել լիազորված օգտագործողին՝ ավարտին հասցնելու սույն օրենքով թույլատրված օգտագործումը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասը կիրառվում է, եթե դրա հետևանքով վնաս չի հասցվի պահպանվող ստեղծագործությունների իրավատերերի իրավունքներին, ովքեր նույնականացվել են կամ պարզվել է նրանց գտնվելու վայրը: Լիազորված օգտագործողը տիրազուրկ ստեղծագործության օգտագործման յուրաքանչյուր դեպքում նշում է նույնականացված հեղինակների և այլ իրավատերերի անունները:

Հոդված 53. Տիրազուրկ ստեղծագործությունների օգտագործումը

1. Տիրազուրկ ստեղծագործությունների նկատմամբ սույն գլխով նախատեսված դրույթները կիրառվում են հանրային գրադարանների, ուսումնական հաստատությունների, թանգարանների, ինչպես նաև հանրային հեռարձակող կազմակերպությունների, արխիվների, ֆիլմադարանների կամ ձայնադարանների նկատմամբ, որոնք հիմնադրվել են Հայաստանի Հանրապետությունում՝ հանրության շահերին ծառայելու նպատակով (այսուհետ՝ լիազորված օգտագործող): Տիրազուրկ ստեղծագործությունների նկատմամբ սույն գլխով նախատեսված դրույթները կիրառվում են նաև այն ստեղծագործությունների նկատմամբ, որոնք առաջին անգամ

լուսընծայվել են Հայաստանի Հանրապետությունում, կամ, լույսընծայում չլինելու դեպքում, առաջին անգամ հեռարձակվել են Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ պահպանվող ստեղծագործություններ), մասնավորապես՝

1) գրքերի, պարբերականների, թերթերի, ամսագրերի կամ այլ տպագրությունների տեսքով հրատարակված ստեղծագործությունների և տեսալսողական ստեղծագործությունների, որոնք ընդգրկված են հանրային գրադարանների, ուսումնական հաստատությունների, թանգարանների, ինչպես նաև արխիվների ու ֆիլմադարանների կամ ձայնադարանների հավաքածուներում.

2) տեսալսողական ստեղծագործությունների, որոնք արտադրվել են հանրային հեռարձակող կազմակերպությունների կողմից, մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը և պահվում են նրանց արխիվներում:

2. Սույն գլխի դրույթները կիրառվում են նաև սույն հոդվածի է 1-ին մասում նշված ստեղծագործությունների նկատմամբ, որոնք երբեք չեն լույսընծայվել կամ հեռարձակվել, սակայն հասանելի են դարձել հանրությանը լիազորված օգտագործողների կողմից՝ իրավատերերի թույլտվությամբ ՝ պայմանով, որ ողջամիտ է ենթադրել, որ իրավատերերը չէին առարկի սույն օրենքի 55-րդ հոդվածով նախատեսված օգտագործմանը:

3. Սույն գլխի դրույթները կիրառվում են նաև այն ստեղծագործությունների նկատմամբ, որոնք զետեղված կամ ներառված են սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշված ստեղծագործություններում կամ դրանց անբաժանելի մասն են կազմում:

Հոդված 54. Պատշաճ որոնումը

1. Պահպանվող ստեղծագործությունը տիրազուրկ համարելու նպատակով համապատասխան լիազորված օգտագործողը պետք է երաշխավորի, որ յուրաքանչյուր պահպանվող ստեղծագործության վերաբերյալ բարեխղճորեն իրականացվել է որոնում (պատշաճ որոնում)՝ տվյալ պահպանվող ստեղծագործության կատեգորիայի մասին համապատասխան աղբյուրներին հարցում կատարելու միջոցով: Պատշաճ որոնումն իրականացվում է նախքան պահպանվող ստեղծագործության օգտագործումը:

2. Սույն հոդվածի 1-ն մասում նշված որոնման աղբյուրների ցանկը հաստատում է մտավոր սեփականության բնագավառի՝ օրենքով լիազորված պետական կառավարման համակարգի մարմինը (այսուհետ՝ պետական կառավարման համակարգի մարմին):

3. Պատշաճ որոնումն իրականացվում է պահպանվող ստեղծագործության առաջին լույսընծայման երկրում, իսկ լույսընծայում չլինելու դեպքում՝ առաջին հեռարձակման երկրում, իսկ՝

1) տեսալսողական ստեղծագործությունների դեպքում՝ արտադրողի գտնվելու վայրը կամ մշտական բնակության երկրում.

2) սույն օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասում նշված ստեղծագործությունների դեպքում՝ այն երկրում, որտեղ հիմնադրված է համապատասխան լիազորված օգտագործողը:

4. Լիազորված օգտագործողները վարում են իրականացված պատշաճ որոնումների գրանցամատյաններ, որտեղ ներառվում են հետևյալ տեղեկությունները՝

1) իրենց պատշաճ որոնումների արդյունքները, որոնք «տիրազուրկ ստեղծագործություն» կարգավիճակի հիմք են հանդիսացել,

2) սույն գլխի դրույթներին համապատասխան տիրազուրկ ստեղծագործության օգտագործման դեպքերը,

3) տիրազուրկ ստեղծագործության կարգավիճակի ցանկացած փոփոխություն,

4) նրանց համապատասխան կոնտակտային տվյալները:

5. Սույն հոդվածի 4-րդ մասում նշված գրանցամատյանի ձևն ու վարման կարգը հաստատում է պետական կառավարման համակարգի մարմինը:

6. Լիազորված օգտագործողները սույն հոդվածի 4-րդ մասում նշված տեղեկատվությունը հասանելի են դարձնում հանրությանը:

Հոդված 55. Տիրազուրկ ստեղծագործությունների թույլատրված օգտագործումը

1. Լիազորված օգտագործողներին թույլատրվում է թվայնացման, մատչելի դարձնելու, ինդեքսավորման, կատալոգներում ընդգրկելու, պահպանման կամ վերականգնման նպատակներով վերարտադրել, ինչպես նաև հանրությանը մատչելի

դարձնել տիրազուրկ ստեղծագործությունները:

2. Սույն հոդվածի 1-ին մասի համաձայն օգտագործումը կարող է իրականացվել միայն լիազորված օգտագործողների հանրային շահերին առնչվող նպատակներով, մասնավորապես՝ իրենց հավաքածուներում ընդգրկված տիրազուրկ ստեղծագործությունների պահպանում, վերականգնում, և մշակութային ու ուսումնական նպատակներով դրանցից օգտվելու հնարավորության ընձեռում:

Հոդված 56. Եկամուտներ և «տիրազուրկ ստեղծագործություն» կարգավիճակի դադարեցում

1. Լիազորված օգտագործողները տիրազուրկ ստեղծագործությունների թույլատրված օգտագործումից կարող են եկամուտ ստանալ բացառապես դրանց թվայնացման և հանրությանը մատչելի դարձնելու ծախսերը ծածկելու համար:

2. Տիրազուրկ համարվող ստեղծագործության իրավատերն իրավունք ունի ցանկացած պահին դադարեցնելու իր ստեղծագործության՝ «տիրազուրկ ստեղծագործություն» կարգավիճակը միայն իր իրավունքների մասով:

ԳԼՈՒԽ 7
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Հոդված 57. Անձնական ոչ գույքային իրավունքների գործողության ժամկետը

1. Անձնական ոչ գույքային իրավունքները գործում են անժամկետ, բացառությամբ հետկանչի իրավունքի, որը գործում է հեղինակի կյանքի ընթացքում:

Հոդված 58. Գույքային իրավունքների գործողության ժամկետը

1. Ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները գործում են հեղինակի կյանքի ընթացքում և շարունակում են գործել նրա մահից հետո՝ 70 տարի, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

Հոդված 59. Համահեղինակությամբ ստեղծված ստեղծագործությունների նկատմամբ գույքային իրավունքների գործողության ժամկետը

1. Համահեղինակությամբ ստեղծված կամ բաղադրյալ ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները գործում են համահեղինակների կյանքի ընթացքում և շարունակում են գործել համահեղինակներից վերջինի մահից հետո՝ 70 տարի:

2. Տեսալսողական ստեղծագործությունների նկատմամբ գույքային իրավունքները գործում են համահեղինակների կյանքի ընթացքում և հեղինակներից վերջինի մահից հետո՝ 70 տարի՝ անկախ տեսալսողական ստեղծագործության համահեղինակների (ռեժիսոր, սցենարի հեղինակ, տվյալ ստեղծագործության համար հատուկ գրված երաժշտության հեղինակ, բեմադրող օպերատոր, երկխոսության հեղինակ) վերաբերյալ սույն օրենքով նախատեսված դրույթներից:

3. Տեքստով երաժշտական ստեղծագործությունների նկատմամբ գույքային իրավունքները գործում են համահեղինակների կյանքի ընթացքում և դրանց հեղինակներից (տեքստի հեղինակ և երաժշտության հեղինակ) վերջինի մահից հետո 70 տարի՝ անկախ համահեղինակների վերաբերյալ սույն օրենքով նախատեսված դրույթներից, պայմանով, որ և՛ տեքստը և՛ երաժշտությունը հատուկ ստեղծվել են տվյալ տեքստով երաժշտական ստեղծագործության համար:

Հոդված 60. Անանուն և կեղծանվամբ ստեղծագործությունների նկատմամբ գույքային իրավունքների գործողության ժամկետը

1. Անանուն կամ կեղծանվամբ ստեղծագործությունների նկատմամբ գույքային իրավունքները ծագում են ստեղծագործությունն օրինական ճանապարհով հրապարակման պահից և գործում են 70 տարի:

2. Եթե հեղինակի կողմից ընտրված կեղծանունն այլևս որևէ կասկած չի առաջացնում հեղինակի ինքնության առնչությամբ կամ հեղինակը բացահայտում է իր անձը սույն հոդվածի 1-ին մասում սահմանված ժամկետում, ապա կիրառվում է սույն օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը:

Հոդված 61. Կոլեկտիվ ստեղծագործությունների նկատմամբ գույքային իրավունքների գործողության ժամկետը

1. Կոլեկտիվ ստեղծագործությունների նկատմամբ գույքային իրավունքների գործողության ժամկետը հաշվարկվում է ստեղծագործության օրինական ճանապարհով հրապարակման պահից՝ 70 տարի:

2. Եթե կոլեկտիվ ստեղծագործության հեղինակները նշվում են հրապարակված ստեղծագործության մեջ որպես այդպիսիք, ապա կիրառվում է սույն օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը:

Հոդված 62. Մասերով հրապարակվող ստեղծագործությունների նկատմամբ գույքային իրավունքների գործողության ժամկետը

1. Եթե սույն օրենքի համաձայն ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքների ժամկետը հաշվարկվում է օրինական ճանապարհով հրապարակման պահից, ապա այն դեպքերում երբ ստեղծագործությունը հրապարակվում է մասերով (հատորներով, պրակներով, շարքերով, սերիաներով, միջարկներով և այլն)՝ ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքների գործողության ժամկետը հաշվարկվում է յուրաքանչյուր այդպիսի մասի համար առանձին՝ օրինական ճանապարհով հրապարակման պահից:

Հոդված 63. Չհրապարակված ստեղծագործությունների նկատմամբ գույքային իրավունքների գործողության ժամկետը

1. Այն ստեղծագործությունները, որոնց նկատմամբ գույքային իրավունքների գործողության ժամկետը սույն օրենքի համաձայն չի հաշվարկվում հեղինակի կամ հեղինակների մահվանից հետո, և որոնք օրինական ճանապարհով չեն հրապարակվել՝ դադարում են պահպանվել ստեղծման պահից 70 տարի հետո:

Հոդված 64. Հեղինակի գույքային իրավունքի ժամկետների հաշվարկը

1. Հեղինակի գույքային իրավունքների գործողության ժամկետները հաշվարկվում են հեղինակի մահվան կամ համապատասխան իրադարձությանը հաջորդող տարվա հունվարի մեկից:

ԳԼՈՒԽ 8

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 65. Իրավունքների փոխանցումը ժառանգաբար

1. Անձնական ոչ գույքային իրավունքները ժառանգաբար չեն փոխանցվում:

2. Հեղինակության իրավունքի, համբավի և արժանապատվության իրավունքի պաշտպանությունն իրականացնում են հեղինակի ժառանգները՝ առանց ժամկետային սահմանափակման: Ժառանգների բացակայության դեպքում նշված իրավունքների պաշտպանությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմինը:

3. Առաջին հրապարակման իրավունքը կարող է իրականացվել գույքային իրավունքները տիրապետող անձի կողմից, եթե հրապարակումը չի հակասում հեղինակի կամքին:

4. Գույքային իրավունքները կարող են ժառանգաբար համապարփակ իրավահաջորդության կարգով անցնել այլ անձի:

Հոդված 66. Իրավունքների փոխանցումը և օգտագործման թույլտվությունը

1. Հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքներն անօտարելի և անփոխանցելի են:

2. Ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները հեղինակը կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն փոխանցվել (զիջվել) երրորդ անձանց՝ իրավունքի փոխանցման (զիջման) պայմանագրի, կամ նրանց տրամադրվել օգտագործման թույլտվություն (լիցենզիա)՝ լիցենզային (հեղինակային) պայմանագրի հիման վրա, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով:

3. Գույքային իրավունքները կարող են իրավատեր իրավաբանական անձի վերակազմակերպման հետևանքով փոխանցվել այլ անձի:

Հոդված 67. Իրավատերը և իրավունքների պաշտպանության սուբյեկտները

1. Հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատերը, կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպություններն և ցանկացած այլ անձ սույն օրենքով սահմանված իր իրավունքները պաշտպանելու նպատակով կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել դատարան:

Հոդված 68. Լիցենզային պայմանագրերը

1. Լիցենզային պայմանագիրը, որը կարգավորում է հեղինակի և ստեղծագործության օգտագործման թույլտվություն ստացած անձի (այսուհետ՝ օգտագործող կամ լիցենզառու) փոխհարաբերությունները, հատուցելի է:

2. Լիցենզիան կարող է լինել բացառիկ կամ ոչ բացառիկ:

3. Ոչ բացառիկ լիցենզիայի դեպքում հեղինակը որոշակի ժամկետով, պայմանագրում նշված պայմաններով ու սահմաններում օգտագործողին տրամադրում է ստեղծագործությունն օգտագործելու իրավունք՝ պահպանելով ստեղծագործության նկատմամբ բացառիկ իրավունքները, այդ թվում՝ այլ անձանց ստեղծագործության օգտագործման թույլտվություն տալու իրավունքը:

4. Բացառիկ լիցենզիայի դեպքում հեղինակը որոշակի ժամկետով, պայմանագրում նշված պայմաններով ու սահմաններում օգտագործողին տրամադրում է ստեղծագործության օգտագործման բացառիկ իրավունք՝ պահպանելով ստեղծագործության օգտագործման իրավունքն այն մասով, որը նախատեսված է պայմանագրով: Այս դեպքում այլ անձանց կողմից ստեղծագործության օգտագործումն արգելելու իրավունքը կարող է իրականացնել հեղինակը, եթե դա չի կատարում օգտագործողը:

5. Եթե պայմանագրում ուղղակիորեն նշված չէ, որ լիցենզիան բացառիկ է, ապա լիցենզիան համարվում է ոչ բացառիկ:

6. Լիցենզառուն կարող է ստեղծագործության նկատմամբ իրեն վերապահված իրավունքը այլ անձի տրամադրել միայն հեղինակի համաձայնությամբ, եթե սույն օրենքով կամ պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Հոդված 69. Լիցենզային պայմանագրի պայմանները

1. Լիցենզային պայմանագրում նշվում են տրամադրվող իրավունքների ծավալը,

ստեղծագործությունն օգտագործելու եղանակները, վարձատրության չափի որոշման կարգը, վարձատրության չափը, վճարման ժամկետն ու կարգը, ինչպես նաև այլ պայմաններ, որոնք կողմերը կհամարեն էական:

2. Լիցենզային պայմանագրում վարձատրությունը որոշվում է որպես ստեղծագործության համապատասխան օգտագործումից ստացված եկամտի տոկոս, իսկ ստեղծագործության բնույթով պայմանավորված դրա անհնարինության դեպքում՝ պայմանագրում ամրագրված որոշակի գումարի տեսքով կամ կողմերի համար ընդունելի այլ եղանակով:

3. Լիցենզային պայմանագրում դրա գործողության տարածքի վերաբերյալ պայմանի բացակայության դեպքում պայմանագրի գործողությունը սահմանափակվում է Հայաստանի Հանրապետության տարածքով:

4. Լիցենզային պայմանագրով չնախատեսված՝ հեղինակի մնացած բոլոր իրավունքները համարվում են չտրամադրված:

5. Լիցենզային պայմանագիրը գործում է դրա մեջ նշված ժամկետում, սակայն դադարում է գույքային իրավունքների գործողության ժամկետը լրանալու պահից: Լիցենզային պայմանագրում դրա գործողության ժամկետի բացակայության դեպքում պայմանագիրը համարվում է կնքված հինգ տարով՝ կնքման պահից հաշված:

6. Լիցենզային պայմանագրով տրամադրված իրավունքները ամբողջությամբ կամ մասնակիորեն լիցենզառուն կարող է տրամադրել այլ անձանց՝ միայն պայմանագրով ուղղակի նախատեսված լինելու դեպքում:

7. Լիցենզային պայմանագրի պայմանները, որոնք հակասում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը՝ առոչինչ են:

8. Լիցենզային պայմանագրի այն պայմանները, որոնք սահմանափակում են ապագայում որոշակի բնագավառում կամ որոշակի տեսակի ստեղծագործություն ստեղծելու հեղինակի իրավունքները, առոչինչ են:

Հոդված 70. Զիջման և լիցենզային պայմանագրերի ձևը

1. Զիջման և լիցենզային պայմանագրերը կնքվում են գրավոր ձևով:

Հոդված 71. Զիջման և լիցենզային պայմանագրերի խախտման դեպքում

կողմերի պատասխանատվությունը

1. Զիջման և լիցենզային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները չկատարած կողմը պետք է հատուցի մյուս կողմին պատճառած վնասը:

Հոդված 72. Լիցենզային պայմանագրով նախատեսված վարձատրության հաշվառումը

1. Եթե վարձատրության չափը համաձայնեցվել կամ որոշվել է ստեղծագործության օգտագործումից ստացվող եկամուտների տոկոսով, ապա լիցենզառուն պետք է վարի համապատասխան հաշվառում, որն անհրաժեշտ է ստացված եկամուտների չափը որոշելու համար:

2. Լիցենզառուն պարտավոր է թույլատրել հեղինակին կամ նրա ներկայացուցչին ստուգելու սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հաշվառման փաստաթղթերը և հաշվետվություն ներկայացնել նրան եկամուտների մասին՝ պարբերաբար և ըստ հիմնավորված անհրաժեշտության:

Հոդված 73. Լիցենզային պայմանագիրը դադարեցնելու հիմքերը

1. Լիցենզային պայմանագրի գործողությունը կարող է դադարել նաև կողմերի համաձայնությամբ, եթե օրենքով կամ պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

2. Բացառիկ լիցենզիայի դեպքում հեղինակը կարող է դադարեցնել պայմանագրի գործողությունը, եթե լիցենզառուն չի օգտագործում ստեղծագործությունը կամ օգտագործում է այն ոչ բավարար չափով, և եթե դա վնասում է հեղինակի օրինական շահերը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված իրավունքը կարող է իրականացվել ոչ շուտ, քան բացառիկ լիցենզիա տրամադրելուց հետո մեկ տարին լրանալը:

4. Սույն հոդվածով նախատեսված պայմանագրի դադարեցման մասին ծանուցումը պետք է լինի գրավոր ձևով:

ԳԼՈՒԽ 9

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 74. Հրատարակչական պայմանագիր

1. Հրատարակչական պայմանագրով հեղինակը հրատարակչին է տրամադրում ստեղծագործությունը տպագիր եղանակով վերարտադրելու և այդ օրինակները տարածելու իրավունքները, իսկ հրատարակիչը պարտավորվում է վերարտադրել ու տարածել ստեղծագործությունը և հեղինակին վճարել պայմանավորված վարձատրությունը:

2. Հրատարակչական պայմանագրում կարող են ներառվել նաև տվյալ ստեղծագործության ակումբային, սերիաներով պարբերական հրատարակությունների, թարգմանության և այլ իրավունքների փոխանցում:

Հոդված 75. Հրատարակչական պայմանագրի ձևը

1. Հրատարակչական պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով:

2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթը չի կիրառվում թերթերին և այլ պարբերականներին տրամադրվող հոդվածներին, նկարներին կամ այլ նյութերին վերաբերող պայմանագրերի նկատմամբ:

Հոդված 76. Հրատարակչական պայմանագրի բովանդակությունը

1. Սույն օրենքի 74-րդ հոդվածով նախատեսված իրավունքների տրամադրումից բացի հրատարակչական պայմանագրում նշվում է նաև՝

1) ժամկետը, որի ընթացքում հեղինակը պետք է տրամադրի ստեղծագործության վերջնական ձեռագիրը կամ այլ ձևով արտահայտված բնօրինակ տարբերակը,

2) ժամկետը, որի ընթացքում հրատարակիչը պետք է սկսի ստեղծագործության օրինակների տարածումը,

3) հրատարակությունների քանակը, որը հրատարակիչն իրավասու է իրականացնել,

4) յուրաքանչյուր հրատարակության օրինակների քանակը,

5) ժամկետը, որի ընթացքում հրատարակիչը առաջին հրատարակության սպառումից հետո պետք է իրականացնի հաջորդը, եթե կա այդպիսի պայմանավորվածություն,

6) օրինակների ձևավորումը և տեխնիկական բնութագրերը,

7) վարձատրության չափը:

Հոդված 77. Հրատարակչական պայմանագրով իրավունքների տրամադրման բացառիկության կանխավարկածը

1. Հրատարակչական պայմանագրով տրամադրվող իրավունքները բացառիկ են, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

2. Սույն հոդվածի 1-ին մասը չի կիրառվում թերթերում և այլ պարբերական հրատարակություններում հոդվածների, նկարների կամ այլ նյութերի հրատարակության նկատմամբ:

Հոդված 78. Հրատարակված ստեղծագործության օրինակների ոչնչացումը

1. Հրատարակված ստեղծագործության՝ պայմանագրով նախատեսված ժամկետում չվաճառված օրինակները որպես թղթաթափոն վերամշակման հանձնելու մտադրություն ունենալու դեպքում, հրատարակիչը նախապես պետք է վերամշակման հանձնելու գնով դրանք առաջարկի հեղինակին:

2. Ժամկետը, որի լրանալուց հետո հրատարակված ստեղծագործության չվաճառված օրինակները կարող են որպես թղթաթափոն հանձնվել վերամշակման, որոշվում է պայմանագրով:

ԳԼՈՒԽ 10
ՊԱՏՎԵՐՈՎ ԿԱՄ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդված 79. Պատվերի պայմանագրով ստեղծված ստեղծագործությունը

1. Պատվերի պայմանագրով հեղինակը պարտավորվում է ստեղծել պատվիրված ստեղծագործությունը և այն պատվիրատուին հանձնել սահմանված ժամկետում, իսկ վերջինս պարտավորվում է դրա դիմաց վարձատրել հեղինակին: Պատվիրված ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները կարգավորվում են հեղինակի և պատվիրատուի միջև կնքված պայմանագրով, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ: Պատվերի պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով:

2. Պատվերի պայմանագրով սահմանվում է նաև ստեղծագործության ստեղծման համար վարձատրության չափը և վճարման կարգը: Պայմանագիրը կարող է նախատեսել նաև՝

1) սահմանված վարձատրությունից հեղինակին կանխավճար տալու պատվիրատուի պարտավորությունը,

2) ստեղծագործության օգտագործման համար վարձատրություն:

3. Ստեղծագործությունը պատվիրած անձը կարող է վերահսկել աշխատանքի ընթացքը և ցուցումներ տալ, եթե դրանով չի խոչընդոտում հեղինակի ուրույն արտահայտվելու ազատությանը:

4. Պատվիրված ստեղծագործությունը պատվիրատուին պայմանագրով սահմանված ժամկետում չհանձնելու դեպքում հեղինակը պարտավոր է հատուցել պատվիրատուին պատճառված վնասը, եթե չի ապացուցում, որ ժամկետի խախտումը տեղի է ունեցել ոչ իր մեղքով:

Հոդված 80. Ծառայողական պայմանագրով ստեղծված ստեղծագործությունը

1. Աշխատողի կողմից ծառայողական պարտականությունների կամ գործատուի ծառայողական հանձնարարությունների կատարման կարգով ստեղծված ստեղծագործության (այսուհետ՝ ծառայողական ստեղծագործություն) նկատմամբ անձնական ոչ գույքային իրավունքները պատկանում են տվյալ աշխատողին:

2. Ծառայողական ստեղծագործության նկատմամբ բոլոր գույքային իրավունքները ի սկզբանե պատկանում են գործատուին, եթե հեղինակի (աշխատողի) և գործատուի միջև կնքված պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

3. Հեղինակի (աշխատողի) և գործատուի միջև կնքված պայմանագիրը կարող է նախատեսել ծառայողական ստեղծագործության օգտագործման յուրաքանչյուր ձևի համար վարձատրություն, վարձատրության հաշվարկման ու վճարման կարգ, ինչպես նաև պարունակել ստեղծագործության օգտագործման այլ պայմաններ:

4. Գործատուն իրավունք ունի նշելու իր անունը կամ անվանումը ծառայողական ստեղծագործության ցանկացած օգտագործման ժամանակ:

ԳԼՈՒԽ 11

ՈՐՈՇ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 81. Կոլեկտիվ ստեղծագործությունների նկատմամբ հեղինակային իրավունքը

1. Կոլեկտիվ ստեղծագործություն է համարվում որևէ անձի (այսուհետ՝ կազմակերպող անձ) նախաձեռնությամբ և պատասխանատվությամբ ստեղծած ստեղծագործությունը: Կոլեկտիվ ստեղծագործության ստեղծումը կազմակերպող անձը (հանրագիտարանների հրատարակիչը, ֆիլմեր պատրաստողը, պրոդյուսերը և այլք) չի համարվում համապատասխան ստեղծագործության հեղինակը:

2. Կոլեկտիվ ստեղծագործության ստեղծումը կազմակերպող անձը, ով հրատարակում է հանրագիտարաններ, հանրագիտարանային բառարաններ, գիտական աշխատությունների պարբերական և շարունակական ժողովածուներ, թերթեր, ամսագրեր և այլ պարբերական հրատարակություններ, այդպիսի ամբողջական ստեղծագործության նկատմամբ ունի օգտագործման բացառիկ իրավունք: Այդ անձը իրավասու է նշելու իր անունը կամ պահանջելու նման նշում՝ տվյալ կոլեկտիվ ստեղծագործության ցանկացած օգտագործման դեպքում:

3. Կոլեկտիվ ստեղծագործության մեջ ընդգրկված ստեղծագործությունների հեղինակները պահպանում են իրենց ստեղծագործություններն այլ ձևով և եղանակով օգտագործելու բացառիկ իրավունքը, եթե կազմակերպող անձի և նրանց միջև կնքված պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Հոդված 82. Ածանցյալ ստեղծագործությունների նկատմամբ հեղինակային իրավունքը

1. Ածանցյալ ստեղծագործությունների հեղինակներ են համարվում այլ անձանց ստեղծագործությունները վերամշակած անձինք՝ թարգմանիչները, ժողովածուներ և այլ հավաքածո ստեղծագործություններ կազմողները: Ածանցյալ ստեղծագործություններն ինքնուրույն ստեղծագործություններ են և պահպանվում են որպես բնօրինակներ:

2. Ածանցյալ ստեղծագործությունների հեղինակներին է պատկանում իրենց կատարած վերափոխումների (թարգմանությունների, հարմարեցումների կամ այլ վերամշակումների) նկատմամբ հեղինակային իրավունքը:

3. Ածանցյալ ստեղծագործությունների հեղինակները կարող են վերափոխել բնօրինակ ստեղծագործությունը միայն դրա հեղինակի թույլտվությամբ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

4. Ածանցյալ ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքն արգելք չի հանդիսանում այլ անձանց իրականացնելու նույն ստեղծագործությունների իրենց թարգմանությունները կամ այլ վերափոխումները, եթե պահպանված են սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված պահանջները:

Հոդված 83. Կազմածո ստեղծագործությունների և տվյալների բազայի նկատմամբ հեղինակային իրավունքը

1. Կազմածո ստեղծագործության կազմողին, տվյալների բազա ստեղծողին է պատկանում իր կողմից հավաքված նյութերի պարունակության ընտրության ու տեղաբաշխման նկատմամբ հեղինակային իրավունքը, որը ստեղծագործական աշխատանքի արդյունք է:

2. Տվյալների բազան անկախ ստեղծագործությունների, տվյալների կամ այլ նյութերի համակարգված կամ հետևողական ձևով դասավորված հավաքածու է, որը անհատապես մատչելի է էլեկտրոնային կամ այլ եղանակով:

3. Կազմածո ստեղծագործությունների համար սույն օրենքով նախատեսված պահպանությունը չի տարածվում դրանց բովանդակության վրա և չի վնասում ժողովածուում ընդգրկված ստեղծագործությունների հեղինակների իրավունքները:

4. Կազմածո ստեղծագործությունների համար սույն օրենքով նախատեսված պահպանությունը չի տարածվում էլեկտրոնային տվյալների բազաների ստեղծման կամ շահագործման համար կիրառվող համակարգչային ծրագրերի վրա: Դրանց նկատմամբ գործում են սույն օրենքով սահմանված համակարգչային ծրագրերի պահպանության դրույթները:

Հոդված 84. Պաշտոնական փաստաթղթերի, խորհրդանիշների և նշանների

նախագծերի նկատմամբ հեղինակային իրավունքը

1. Պաշտոնական փաստաթղթերի, խորհրդանիշների կամ նշանների նախագծի նկատմամբ հեղինակության իրավունքը պատկանում է նախագիծը ստեղծած անձին (մշակողին):

2. Պաշտոնական փաստաթղթերի, խորհրդանիշների և նշանների նախագծեր մշակողներն իրավունք ունեն հրապարակել նախագիծը, եթե նախագիծը մշակելու հանձնարարությունը տվող մարմինը դա չի արգելում: Նախագիծը հրապարակելիս մշակողներն իրավունք ունեն նշել իրենց անունը:

3. Իրավասու մարմինը պաշտոնական փաստաթուղթ նախապատրաստելու նպատակով կարող է նախագիծն օգտագործել առանց մշակողի համաձայնության, եթե նախագիծը հրապարակել կամ իրավասու մարմին է ուղարկել մշակողը:

4. Նախագծի հիման վրա պաշտոնական փաստաթղթեր, խորհրդանիշներ և նշաններ նախապատրաստելիս պաշտոնական փաստաթուղթը, խորհրդանիշը կամ նշանը նախապատրաստող մարմնի հայեցողությամբ նախագծում կարող են կատարվել լրացումներ և փոփոխություններ:

5. Հավանության արժանանալու դեպքում իրավասու մարմինը կարող է նախագիծն օգտագործել առանց հեղինակի անունը նշելու:

Հոդված 85. Լուսանկարչական ստեղծագործությունների նկատմամբ հեղինակային իրավունքը

1. Դիմանկար պարունակող լուսանկարչական ստեղծագործության վերարտադրությունը, փոփոխումը և տարածումը, թույլատրվում է միայն լուսանկարում պատկերված անձի և հեղինակի միջև կնքված պայմանագրով:

2. Եթե պայմանագրով այլ պայմաններ սահմանված չեն, ապա սույն հոդվածի առաջին մասով նախատեսված՝ լուսանկարում պատկերված անձի թույլտվությունն անհրաժեշտ չէ հետևյալ դեպքերում ՝

1) պատկերված անձը մասնագիտությամբ մոդել է և (կամ) վարձատրվել է կեցվածք ընդունելու համար և դա կապված է իր մասնագիտական գործունեության հետ.

2) պատկերված անձը հանրային գործունեությամբ հայտնի մարդ է, և լուսանկարչական ստեղծագործությունը ստեղծվել է նշված գործունեության ընթացքում.

3) պատկերված անձը միայն որպես դետալ է հանդիսանում բնապատկեր կամ մարդկանց բազմություն կամ հանրային միջոցառում պարունակող լուսանկարչական ստեղծագործության մեջ:

ԳԼՈՒԽ 12
ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 86. Տեսալսողական ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը

1. Տեսալսողական ստեղծագործությունը ձայնի ուղեկցությամբ կամ առանց դրա միմյանց հետ կապակցված պատկերների ամրագրված շարք է, որն ստեղծագործական աշխատանքի յուրօրինակ արդյունք է և հնարավոր է համապատասխան տեխնիկական սարքերի միջոցով դիտել, իսկ ձայնի ուղեկցության դեպքում՝ նաև լսել:

2. Տեսալսողական ստեղծագործության հեղինակներ (համահեղինակներ) են համարվում՝

1) բեմադրող ռեժիսորը,

2) սցենարի հեղինակը,

3) երկխոսության հեղինակը,

4) բեմադրող օպերատորը,

5) հատուկ տվյալ տեսալսողական ստեղծագործության համար ստեղծված երաժշտության հեղինակը:

3. Եթե տեսալսողական ստեղծագործության մեջ անիմացիան կազմում է ստեղծագործության կեսից ավելին, ապա անիմացիայի հեղինակը համարվում է այդպիսի տեսալսողական ստեղծագործության համահեղինակ:

4. Արդեն գոյություն ունեցող ստեղծագործության հեղինակը բացառիկ իրավունք ունի թույլատրելու կամ արգելելու իր ստեղծագործության վերափոխումը կամ ընդգրկումը տեսալսողական ստեղծագործության մեջ:

5. Տեսալսողական ստեղծագործության արտադրող համարվում է այն անձը, ում նախաձեռնությամբ և պատասխանատվությամբ ստեղծվում է տեսալսողական ստեղծագործությունը:

6. Տեսալսողական ստեղծագործության արտադրողն իրավասու է այդ ստեղծագործության ցանկացած օգտագործման դեպքում նշելու իր անունը կամ անվանումը կամ պահանջելու այդպիսի նշում:

7. Առանց տեսալսողական ստեղծագործության արտադրողի համաձայնության արգելվում է տեսալսողական ստեղծագործության բնօրինակի (նեգատիվի) ոչնչացումը:

Հոդված 87. Տեսալսողական ստեղծագործության արտադրության պայմանագիրը

1. Տեսալսողական ստեղծագործության արտադրողի և դրա համահեղինակների և դրա մեջ ստեղծագործական ներդրումներ ունեցող այլ հեղինակների միջև հարաբերությունները կարգավորվում են տեսալսողական ստեղծագործության արտադրության պայմանագրով: Տեսալսողական ստեղծագործության արտադրության պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով:

2. Տեսալսողական ստեղծագործություն ստեղծելու մասին պայմանագրի կնքումը ենթադրում է, որ համահեղինակները տեսալսողական ստեղծագործության արտադրողին են փոխանցում տվյալ տեսալսողական ստեղծագործության նկատմամբ իրենց գույքային իրավունքները, ինչպես նաև դրա թարգմանության, ենթագրության և կրկնօրինակման իրավունքները, տեսալսողական ստեղծագործության համար արված լուսանկարների նկատմամբ իրավունքները, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

3. Անկախ սույն հոդվածի 2-րդ մասից տեսալսողական ստեղծագործության հեղինակները տեսալսողական ստեղծագործության բնօրինակը կամ դրա օրինակները ցանկացած վարձույթով տալու դեպքում հեղինակները պահպանում են

վարձատրություն ստանալու իրենց իրավունքները:

4. Եթե տեքստով կամ առանց տեքստի երաժշտական ստեղծագործության հեղինակները տեսալսողական ստեղծագործության արտադրողին են փոխանցել տվյալ ստեղծագործության առանձին՝ հնչյունագրի կամ տեսագրության միջոցով հանրությանը հաղորդելու և հեռարձակման իրենց իրավունքները, նրանք պահպանում են այդպիսի՝ հնչյունագրի կամ տեսագրության միջոցով հանրությանը հաղորդելու և հեռարձակման դիմաց վարձատրություն ստանալու իրավունքը:

5. Սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված վարձատրություն ստանալու իրավունքը անօտարելի և անփոխանցելի է: Վարձատրության հավաքումը, բաշխումը և վճարումն իրականացվում է գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպությունների միջոցով:

6. Տեսալսողական ստեղծագործությունների հեղինակները, ովքեր համաձայնություն են տվել իրենց ստեղծագործությունները տեսալսողական ստեղծագործության մեջ ընդգրկելու համար, իրավասու չեն արգելելու դրա լույսընծայումը կամ որևէ ձևով սահմանափակելու տեսալսողական ստեղծագործության օգտագործումը:

ԳԼՈՒԽ 13
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 88. Համակարգչային ծրագիրը

1. Սույն օրենքի իմաստով համակարգչային ծրագիրը ցանկացած ձևով արտահայտված ծրագիր է, ներառյալ՝ դրա ստեղծման համար անհրաժեշտ նախապատրաստական նյութերը, որը պահպանվում է որպես գրական ստեղծագործություն, եթե դա յուրօրինակ է և ստեղծագործական աշխատանքի արդյունք է:

2. Համակարգչային ծրագրի ցանկացած տարրի, ներառյալ՝ ինտերֆեյսի հիմքում ընկած գաղափարները և սկզբունքները չեն պահպանվում:

Հոդված 89. Համակարգչային ծրագրի նկատմամբ հեղինակի իրավունքները

1. Եթե սույն օրենքի 90-րդ և 91-րդ հոդվածներով այլ բան նախատեսված չէ, ապա համակարգչային ծրագրի հեղինակը բացառիկ իրավունք ունի կատարելու կամ թույլատրելու հետևյալ գործողությունները՝

1) համակարգչային ծրագրի մշտական կամ ժամանակավոր վերարտադրությունը ցանկացած միջոցներով և ձևով, մասամբ կամ ամբողջությամբ: Եթե համակարգչային ծրագրի լիաբեռնման, ցուցադրման, գործարկման, տարածման կամ պահեստավորման համար անհրաժեշտ է դրա վերարտադրությունը, ապա անհրաժեշտ է հեղինակի թույլտվությունը.

2) համակարգչային ծրագրի թարգմանությունները, մշակումները, հարմարեցումները կամ ցանկացած այլ փոփոխությունները և դրանց արդյունքների վերարտադրությունը՝ առանց խախտելու իր թույլտվությամբ այդ փոփոխությունները կատարող անձի իրավունքները.

3) ցանկացած ձևով համակարգչային ծրագրի բնօրինակի կամ օրինակների տարածումը, ներառյալ՝ վարձույթով տալը:

2. Համակարգչային ծրագրի օրինակների նկատմամբ տարածման իրավունքը՝ բացառությամբ համակարգչային ծրագրի կամ դրա օրինակների վարձույթը վերահսկելու իրավատիրոջ իրավունքից, սպառվում է Հայաստանի Հանրապետությունում, եթե դրանք՝ հեղինակի կողմից կամ նրա համաձայնությամբ քաղաքացիական շրջանառության մեջ են դրվել Հայաստանի Հանրապետությունում կամ այլ երկրում, որի հետ գործում է ընդհանուր շուկայի կամ ընդհանուր մաքսային սահմանի մասին Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիր:

Հոդված 90. Համակարգչային ծրագրի նկատմամբ իրավունքների սահմանափակումը

1. Համակարգչային ծրագիրն օրինական օգտագործողն ազատ է ծրագիրն օգտագործել այնքանով, որքանով դա համապատասխանում է ծրագրի գործնական նպատակին, ներառյալ՝ դրանում առկա սխալների ուղղումը:

2. Համակարգչային ծրագիրն օրինական օգտագործողն ազատ է ստեղծել համակարգչային ծրագրի մեկ պահուստային օրինակ, եթե դա անհրաժեշտ է դրա

օգտագործման համար:

3. Համակարգչային ծրագրի ցանկացած տարրի հիմքում ընկած գաղափարներն ու սկզբունքները որոշելու նպատակով դրա օրինական օգտագործողն իր իրավասության շրջանակներում ծրագիրը լիաբեռնելու, էկրանի վրա ցուցադրելու, գործարկելու, փոխանցելու կամ հիշողության մեջ թվային տեսքով պահելու գործողություններից որևէ մեկը կատարելիս կարող է անարգել զննել, ուսումնասիրել կամ փորձարկել ծրագրի գործարկումը:

4. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված դրույթներին հակասող պայմանագրի պայմաններն առոչինչ են:

Հոդված 91. Դեկոմպիլյացիա

1. Օրինական օգտագործողն առանց հեղինակի համաձայնության և վարձատրության իրավունք ունի վերարտադրելու և վերափոխելու ծրագրի օբյեկտային կոդը ելքային տեքստի (համակարգչային ծրագրի դեկոմպիլյացիա) կամ այլ անձանց հանձնարարելու այդ գործողությունների կատարումը, եթե դրանք անհրաժեշտ են ինքնուրույն ստեղծված համակարգչային ծրագիրն այլ ծրագրերի կամ սարքերի հետ փոխգործողության ունակության հասնելու նպատակով անհրաժեշտ տեղեկատվություն ձեռք բերելու համար, պայմանով, որ՝

1) այդ գործողությունները կատարվում են օրինական օգտագործողի կամ այլ իրավասու անձի կողմից կամ նրանց հանձնարարությամբ՝ այլ լիազորված անձի կողմից.

2) փոխգործողության ունակության հասնելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված անձանց նախօրոք մատչելի չի դարձել այլ աղբյուրներից.

3) նշված գործողությունները սահմանափակված են դեկոմպիլյացվող ծրագրի այն մասերով, որոնք անհրաժեշտ են փոխգործողության ունակության հասնելու համար:

2. Սույն հոդվածի 1-ին մասի պայմանների առկայության դեպքում ստացված տեղեկատվությունը՝

1) ինքնուրույն ստեղծված համակարգչային ծրագրի փոխգործողության

ունակության հասնելու նպատակից բացի այլ նպատակներով չի օգտագործվում.

2) չի փոխանցվում այլ անձանց, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք անհրաժեշտ են ինքնուրույն ստեղծած համակարգչային ծրագրի փոխգործողության ունակության համար.

3) չի օգտագործվում իր արտահայտման ձևի մեջ էականորեն նման համակարգչային ծրագրի մշակման, արտադրման կամ քաղաքացիական շրջանառության մեջ դրվելու, կամ հեղինակային իրավունքը խախտող որևէ այլ գործողություն կատարելու համար:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված դրույթները չեն կարող մեկնաբանվել այնպես, որ թույլատրվի դրանց կիրառումը՝ հեղինակի օրինական շահերը անհիմն վնասելով կամ համակարգչային ծրագրի բնականոն օգտագործմանը հակասելով:

4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված դրույթներին հակասող պայմանագրի պայմաններն առոչինչ են:

Հոդված 92. Ծառայողական և պատվերով ստեղծված համակարգչային ծրագրերը

1. Եթե համակարգչային ծրագիրը ստեղծվում է ծառայողական պարտականությունների կամ գործատուի ծառայողական հանձնարարությունների կատարման կարգով կամ ստեղծվում է պատվերի պայմանագրով, ապա այդպիսի ծրագրի նկատմամբ գույքային իրավունքները ի սկզբանե պատկանում են գործատուին կամ նշված ծրագիրը պատվիրող անձին, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

ԳԼՈՒԽ 14
ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Հոդված 93. Հարակից իրավունքների օբյեկտները

1. Հարակից իրավունքները տարածվում են կատարումների, ինչյունագրերի, տեսագրությունների, հեռարձակող կազմակերպությունների հաղորդումների,

տվյալների բազաների պարունակության, հրատարակչական ձևավորումների վրա:

Հոդված 94. Հարակից իրավունքների սուբյեկտները

1. Հարակից իրավունքների սուբյեկտներ են կատարողները, հնչյունագիր արտադրողները, տեսագրության արտադրողները, հեռարձակող կազմակերպությունները, տվյալների բազաներ պատրաստողները և հրատարակիչները:

2. Կատարման նկատմամբ իրավունքը պատկանում է կատարողին:

3. Հնչյունագրի նկատմամբ իրավունքը պատկանում է հնչյունագիր արտադրողին:

4. Տեսագրության նկատմամբ իրավունքը պատկանում է տեսագրություն արտադրողին:

5. Հեռարձակող կազմակերպության հաղորդման նկատմամբ իրավունքը պատկանում է տվյալ հեռարձակող կազմակերպությանը:

6. Տվյալների բազայի պարունակության նկատմամբ իրավունքը պատկանում է տվյալների բազան պատրաստողին:

7. Հրատարակչական ձևավորման նկատմամբ իրավունքը պատկանում է հրատարակչին:

Հոդված 95. Հարակից իրավունքների ծագման պայմանները և այդ իրավունքների մասին ծանուցումը

1. Հարակից իրավունքների ծագման և իրագործման համար գրանցման կամ որևէ այլ գործողության կատարում չի պահանջվում:

2. Հնչյունագիր կամ տեսագրություն արտադրողները հարակից իրավունքների մասին ծանուցելու նպատակով ամրագրման կրիչի յուրաքանչյուր օրինակի կամ դա պարունակող տուփի վրա կարող են դնել հարակից իրավունքների պահպանության նշանը, որը կազմված է՝

1) շրջանագծի մեջ վերցված լատինական «P» տառից,

2) հարակից իրավունքների իրավատիրոջ անունից կամ անվանումից,

3) հնչյունագրի կամ տեսագրության առաջին լույսընծայման տարեթվից:

Հոդված 96. Կատարումը և կատարողները

1. Կատարում է համարվում դերասանի, երգչի, երաժշտի, պարողի, դիրիժորի, խմբավարի կամ այլ անձի կատարումը, որը դերակատարում, երգում, ասմունքում, ներկայացնում կամ այլ ձևով կատարում է գրական կամ գեղարվեստական ստեղծագործություն, այդ թվում՝ ֆոլկլյորի ստեղծագործություններ:

2. Կատարողներ են համարվում դերասանները, երգիչները, երաժիշտները, պարողները, դիրիժորները, խմբավարները և այլ անձինք, ովքեր դեր են կատարում, երգում են, արտասանում, նվագում կամ այլ ձևով կատարում են գրական կամ գեղարվեստական ստեղծագործություններ, կրկեսային, տիկնիկային, էստրադային և համանման այլ ներկայացումներ, ինչպես նաև այլ ստեղծագործություններ:

3. Սույն հոդվածի իմաստով կատարողներ են համարվում նաև նվագախմբի, երգչախմբի դիրիժորները, խմբավարները, հնչյունային ռեժիսորները:

Հոդված 97. Կատարողի անձնական ոչ գույքային իրավունքները

1. Կատարողին են պատկանում իր կատարման նկատմամբ հետևյալ անձնական ոչ գույքային իրավունքները՝

1) կատարող ճանաչվելու այնպես, որ նրա անունը նշվի իր կատարման ամրագրման վրա կամ կատարման առնչությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ իրավունքի սահմանափակումը պայմանավորված է կատարման օգտագործման բնույթով.

2) պաշտպանելու կատարումը հնարավոր աղավաղումներից, իր համբավին կամ արժանապատվությանը վնաս հասցնող այլ ոտնձգություններից:

2. Կատարողների անձնական ոչ գույքային իրավունքներն անօտարելի և անփոխանցելի իրավունքներ են և գործում են անժամկետ:

Հոդված 98. Կատարողի գույքային իրավունքները

1. Կատարողը բացառիկ իրավունք ունի օգտագործելու իր կատարումը ցանկացած ձևով և եղանակով և դրա օգտագործման յուրաքանչյուր ձևի համար ստանալ վարձատրություն, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

2. Կատարողն իրավունք ունի թույլատրելու կամ արգելելու երրորդ անձանց իրականացնել իր՝

1) չամրագրված կատարման հրապարակային կատարումը.

2) չամրագրված կատարման հեռարձակումը.

3) չամրագրված կատարման ամրագրումը

4)հնչյունագրում կամ տեսագրությունում ամրագրված կատարման վերարտադրությունը.

5) հնչյունագրում կամ տեսագրությունում ամրագրված կատարման տարածումը.

6) հնչյունագրում կամ տեսագրությունում ամրագրված կատարման վարձույթով տալը.

7) հնչյունագրում կամ տեսագրությունում ամրագրված կատարման փոխատվությունը.

8) հնչյունագրում կամ տեսագրությունում ամրագրված կատարումը հանրությանը մատչելի դարձնելը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված թույլտվությունները տալիս է կատարողը, իսկ կատարողների խմբի դեպքում՝ ինչպիսիք են նվագախմբերը, երգչախմբերը, պարային խմբերը, թատերախմբերը կամ այլ նմանատիպ համույթները, կատարողների լիազորած անձը՝ օգտագործողի հետ գրավոր պայմանագիր կնքելու միջոցով: Կատարողների խմբի հետ կնքված պայմանագիրը չի տարածվում դիրիժորների և մենակատարների վրա:

4. Կատարողի կողմից ծառայողական պարտականությունների կամ գործատուի հանձնարարությունների կատարման կարգով ստեղծված կատարման նկատմամբ գույքային իրավունքները պատկանում են գործատուին, եթե նրանց միջև կնքված պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

5. Կատարողն իրավունք չունի արգելելու երրորդ անձանց կողմից կատարումների ամրագրումների օրինակների տարածումը Հայաստանի Հանրապետությունում, եթե դրանք կատարողի կողմից կամ նրա համաձայնությամբ քաղաքացիական շրջանառության մեջ են դրվել Հայաստանի Հանրապետությունում կամ այլ երկրում, որի հետ գործում է ընդհանուր շուկայի կամ ընդհանուր մաքսային սահմանի մասին Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիր:

6. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավունքներն օրենքով սահմանված կարգով ամբողջությամբ կամ մասնակիորեն կարող են այլ անձի փոխանցվել զիջման պայմանագրով կամ օգտագործման թույլտվություն տրամադրվել լիցենզային պայմանագրով:

Հոդված 99. Կատարողի իրավունքների փոխանցման առանձնահատկությունը

1. Տեսալսողական ստեղծագործության ստեղծման մասին արտադրողի հետ կնքված պայմանագրով կատարողների կողմից իրենց կատարման նկատմամբ գույքային իրավունքների, դրա թարգմանության, ենթագրության և կրկնօրինակման, տեսալսողական ստեղծագործության հետ կապված իրենց կատարման լուսանկարների նկատմամբ գույքային իրավունքները փոխանցվում են տեսալսողական ստեղծագործության արտադրողին, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

2. Սույն օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված վարձույթով տալու իրավունքը հնչյունագրի, տեսագրության կամ տեսալսողական ստեղծագործության արտադրողին զիջելու կամ տրամադրելու դեպքում կատարողը պահպանում է վարձույթով տալու համար վարձատրություն ստանալու իր իրավունքը: Այդ իրավունքն իրականացվում է միայն գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպության միջոցով: Սույն դրույթին հակասող պայմանագրի ցանկացած դրույթ առոչինչ է:

Հոդված 100. Կատարողի գույքային իրավունքների պահպանության ժամկետները

1. Կատարողի գույքային իրավունքները ծագում են կատարման պահից և գործում են 50 տարի: Սակայն, եթե՝

1) կատարման ամրագրումը, բացի հնչյունագրում ամրագրվածից, այդ ժամանակահատվածում օրինական ճանապարհով լույս է ընծայվել կամ օրինական ճանապարհով հաղորդվել է հանրությանը, ապա պահպանության ժամկետը գործում

է առաջին այդպիսի լույսընծայման կամ առաջին անգամ հանրությանը հաղորդելու պահից (որն ավելի շուտ է տեղի ունեցել) ՝ 50 տարի:

2) հնչյունագրում ամրագրված կատարումը օրինական ճանապարհով լույս է ընծայվել կամ օրինական ճանապարհով հաղորդվել է հանրությանը այդ ժամանակահատվածում, ապա պահպանության ժամկետը գործում է առաջին այդպիսի լույսընծայման կամ առաջին անգամ հանրությանը հաղորդելու պահից (որն ավելի շուտ է տեղի ունեցել) ՝ 70 տարի:

Հոդված 101. Հնչյունագիրը և հնչյունագիր արտադրողը

1. Հնչյունագիր արտադրողն այն ֆիզիկական կամ իրավաբանական անձն է, որի նախաձեռնությամբ և պատասխանատվությամբ իրականացվել է կատարման հնչյունների կամ այլ հնչյունների կամ հնչյունների ներկայացման առաջին ամրագրումը:

2. Հնչյունագիրը կատարման հնչյունների կամ այլ հնչյունների կամ դրանց ներկայացման ամրագրումն է բացառապես ունկնդրելու համար, բացի դրանց ամրագրման այն ձևից, որն ընդգրկված է տեսալսողական ստեղծագործությունում:

3. Ամրագրումը հնչյունների մարմնավորումն է կամ դրանց ներկայացումն է, որը հնարավորություն է տալիս դրանք ընկալել, վերարտադրել կամ հաղորդել սարքի միջոցով:

Հոդված 102. Հնչյունագիր արտադրողի գույքային իրավունքները

1. Հնչյունագիր արտադրողը բացառիկ իրավունք ունի թույլատրելու կամ արգելելու իր՝

1) հնչյունագրի վերարտադրությունը.

2) հնչյունագրի տարածումը.

3) հնչյունագիրը վարձույթով տալը.

4) հնչյունագրի փոխատվությունը.

5) հնչյունագիրը հանրությանը մատչելի դարձնելը:

2. Հնչյունագիր արտադրողն իրավունք չունի արգելելու երրորդ անձանց կողմից հնչյունագրի օրինակների տարածումը Հայաստանի Հանրապետությունում, եթե

դրանք հնչյունագիր արտադրողի կողմից կամ նրա համաձայնությամբ քաղաքացիական շրջանառության մեջ են դրվել Հայաստանի Հանրապետությունում կամ այլ երկրում, որի հետ գործում է ընդհանուր շուկայի կամ ընդհանուր մաքսային սահմանի մասին Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիր:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքներն օրենքով սահմանված կարգով ամբողջությամբ կամ մասնակիորեն կարող են այլ անձի փոխանցվել զիջման պայմանագրով կամ օգտագործման տրամադրվել լիցենզային պայմանագրով:

Հոդված 103. Հնչյունագիր արտադրողի գույքային իրավունքների պահպանության ժամկետը

1. Հնչյունագիր արտադրողի գույքային իրավունքները գործում են ամրագրման պահից և գործում են 50 տարի: Սակայն եթե՝

1) այդ ժամանակահատվածում հնչյունագիրն օրինական ճանապարհով լույս է ընծայվել, ապա հնչյունագիր արտադրողի իրավունքները գործում են 70 տարի՝ առաջին այդպիսի լույսընծայման պահից.

2) սույն մասի 1-ին կետում նշված ժամկետում հնչյունագիրն օրինական ճանապարհով լույս չի ընծայվել, սակայն օրինական ճանապարհով հաղորդվել է հանրությանը, ապա հնչյունագիր արտադրողի իրավունքները գործում են 70 տարի՝ առաջին անգամ հանրությանը հաղորդելու պահից:

2. Եթե հնչյունագիրն օրինական ճանապարհով լույս ընծայվելուց կամ հանրությանը հաղորդվելուց հետո 50 տարի անց հնչյունագիր արտադրողը լույս չի ընծայում հնչյունագրի օրինակները կամ դրանք մատչելի չի դարձնում հանրությանը, կատարողը կամ նրա իրավահաջորդը կարող է դադարեցնել հնչյունագիր արտադրողի հետ կնքած իր պայմանագրի գործողությունը:

Հոդված 104. Առևտրային նպատակով լույս ընծայված հնչյունագրի, տեսագրության օգտագործումը

1. Կատարողը, հնչյունագիր կամ տեսագրություն արտադրողն արդարացի վարձատրություն ստանալու իրավունք ունի լույսընծայված հնչյունագրերում,

տեսագրություններում ամրագրված իր կատարումների, լույսընծայված հնչյունագրերի, տեսագրությունների կամ դրանց օրինակների՝ իրենց բացառիկ իրավունքներով չնախատեսված՝ հեռարձակման և հանրությանը հաղորդելու նպատակով ուղղակի կամ անուղղակի օգտագործման համար:

2. Օգտագործողը, սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված յուրաքանչյուր այդպիսի օգտագործման համար, միանվագ արդարացի վարձատրություն է վճարում գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպությանը:

3. Կատարողի և հնչյունագիր կամ տեսագրություն արտադրողի միջև վարձատրության բաշխումը կատարվում է նրանց միջև կնքված պայմանագրի համաձայն, իսկ դրա բացակայության դեպքում հասանելիք վարձատրությունը նրանց միջև բաշխվում է հավասարաչափ:

4. Սույն հոդվածի նպատակով հնչյունագրերը, տեսագրությունները, որոնք հանրության համար մատչելի են դարձել սույն օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝ դիտվում են որպես լույսընծայված:

Հոդված 105. Տեսագրությունը և տեսագրություն արտադրողը

1. Տեսագրություն արտադրողն այն ֆիզիկական կամ իրավաբանական անձն է, ում նախաձեռնությամբ և պատասխանատվությամբ պատրաստվում է տեսագրությունը:

2. Տեսագրությունը տեսալսողական ստեղծագործության կամ շարժվող պատկերների տեսալսողական ամրագրումն է:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տեսալսողական ամրագրումը շարժվող պատկերների շարքի մարմնավորումը (նյութականացված արտահայտումը) կամ դրանց ներկայացումն է ձայնի ուղեկցությամբ կամ առանց դրա, որը թույլ է տալիս դրանց ընկալումը, վերարտադրումը կամ հաղորդումը համապատասխան սարքերի միջոցով:

Հոդված 106. Տեսագրություն արտադրողի գույքային իրավունքները

1. Տեսագրություն արտադրողը բացառիկ իրավունք ունի թույլատրելու կամ արգելելու իր՝

1) տեսագրության վերարտադրությունը.

2) տեսագրության տարածումը.

3) տեսագրությունը վարձույթով տալը.

4) տեսագրության փոխատվությունը.

5) տեսագրությունը հանրությանը մատչելի դարձնելը:

2. Տեսագրություն արտադրողն իրավունք չունի արգելելու երրորդ անձանց կողմից տեսագրության օրինակների տարածումը Հայաստանի Հանրապետությունում, եթե դրանք տեսագրություն արտադրողի կողմից կամ նրա համաձայնությամբ քաղաքացիական շրջանառության մեջ են դրվել Հայաստանի Հանրապետությունում կամ այլ երկրում, որի հետ գործում է ընդհանուր շուկայի կամ ընդհանուր մաքսային սահմանի մասին Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիր:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքներն օրենքով սահմանված կարգով ամբողջությամբ կամ մասնակիորեն կարող են փոխանցվել զիջման պայմանագրով այլ անձի կամ տրամադրվել լիցենզային պայմանագրով:

Հոդված 107. Տեսագրություն արտադրողի գույքային իրավունքների պահպանության ժամկետը

1. Տեսագրություն արտադրողի գույքային իրավունքները ծագում են ամրագրման պահից և գործում են 50 տարի:

2. Եթե այդ ժամանակահատվածում տեսագրությունն օրինական ճանապարհով լույս է ընծայվել կամ հաղորդվել է հանրությանը, ապա տեսագրություն արտադրողի իրավունքները ծագում են առաջին այդպիսի լույսընծայման կամ առաջին անգամ հանրությանը հաղորդելու պահից (որն ավելի շուտ է տեղի ունեցել) և գործում են 50 տարի:

Հոդված 108. Հեռարձակող կազմակերպության հաղորդումը

1. Հեռարձակող կազմակերպության հաղորդումն այն հաղորդումն է, որը պատրաստվել է հեռարձակող կազմակերպության կամ նրա պատվերով և միջոցներով՝ այլ անձի կողմից:

Հոդված 109. Հեռարձակող կազմակերպության գույքային իրավունքները

1. Հեռարձակող կազմակերպությունը բացառիկ իրավունք ունի արգելելու կամ թույլատրելու իր՝

1) հաղորդման ամրագրումը.

2) հաղորդման ամրագրման վերարտադրությունը.

3) հաղորդման ամրագրման տարածումը.

4) հաղորդման վերահեռարձակումը.

5) հաղորդման երկրորդային հեռարձակումը, եթե նման հաղորդումն իրականացվում է հանրության համար վճարովի մուտքով վայրերում.

6) հաղորդումը մատչելի դարձնելը հանրությանը :

2. Հեռարձակող կազմակերպությունն իրավունք չունի արգելելու երրորդ անձանց կողմից հաղորդման օրինակների տարածումը Հայաստանի Հանրապետությունում, եթե դրանք հեռարձակող կազմակերպության կողմից կամ նրա համաձայնությամբ շրջանառության մեջ են դրվել Հայաստանի Հանրապետությունում կամ այլ երկրում, որի հետ գործում է ընդհանուր շուկայի կամ ընդհանուր մաքսային սահմանի մասին Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիր:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքներն օրենքով սահմանված կարգով, ամբողջությամբ կամ մասնակիորեն, այլ անձի կարող են փոխանցվել զիջման պայմանագրով կամ օգտագործման տրամադրվել լիցենզային պայմանագրով:

Հոդված 110. Հեռարձակող կազմակերպության գույքային իրավունքների պահպանության ժամկետը

1. Հեռարձակող կազմակերպության գույքային իրավունքները ծագում են հաղորդման առաջին հեռարձակման պահից և գործում են 50 տարի:

Հոդված 111. Հրատարակչի իրավունքը

1. Հրատարակչական, պոլիգրաֆիական և գեղարվեստական ներքին և արտաքին ձևավորման նկատմամբ բացառիկ իրավունքը պատկանում է տվյալ ձևավորումն իրականացրած հրատարակչին:

2. Հրատարակիչն իրավունք ունի արգելելու կամ թույլատրելու երրորդ անձանց իր հրատարակությունների հրատարակչական ձևավորումների վերարտադրությունը:

3. Հրատարակիչը կարող է պայմանագրով այլ անձանց տրամադրել հրատարակչական ձևավորումն օգտագործելու իրավունքը:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքն օրենքով սահմանված կարգով, ամբողջությամբ կամ մասնակիորեն, այլ անձի կարող են փոխանցվել զիջման պայմանագրով կամ օգտագործման տրամադրվել լիցենզային պայմանագրով:

5. Հրատարակչի գույքային իրավունքը ծագում է ստեղծագործության հրատարակման պահից և գործում է 50 տարի:

Հոդված 112. Անտիպ (չտպագրված) ստեղծագործությունների պահպանությունը

1. Ցանկացած անձ, որը գույքային իրավունքների գործողության ժամկետի ավարտից հետո առաջին անգամ օրինական ճանապարհով հրատարակում կամ այլ միջոցներով հաղորդում է հանրությանը անտիպ ստեղծագործությունը, օգտվում է հեղինակի՝ սույն օրենքով նախատեսված գույքային իրավունքներից:

2. Անտիպ ստեղծագործության նկատմամբ իրավունքները ծագում են առաջին անգամ օրինական ճանապարհով դրա լույսընծայման կամ այլ միջոցներով հանրությանը մատչելի դարձնելու պահից և գործում են 25 տարի:

Հոդված 113. Քննադատական և գիտական աշխատությունների հրատարակությունները

1. Ցանկացած անձ, որը պատրաստում է հանրության սեփականությունը դարձած ստեղծագործությունների քննադատական և գիտական հրատարակությունները, որոնք, լինելով գիտահետազոտական աշխատանքների արդյունք, էականորեն տարբերվում են տվյալ աշխատության արդեն հայտնի

հրատարակություններից, օգտվում է հեղինակի՝ սույն օրենքով նախատեսված գույքային իրավունքներից:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված իրավունքները գործում են 30 տարի՝ քննադատական և գիտական հրատարակության առաջին օրինական հրատարակության պահից:

Հոդված 114. Տվյալների բազա պատրաստողը

1. Սույն օրենքի իմաստով տվյալների բազա պատրաստող է համարվում ցանկացած անձ, որն իր նախաձեռնությամբ և պատասխանատվությամբ որակապես կամ քանակապես էական ներդրում է կատարել տվյալների բազայի պարունակության ձեռքբերման, ճշգրտման կամ ներկայացման համար:

2. Տվյալների բազայի պարունակության որևէ որակական կամ քանակական էական փոփոխություն, ներառյալ՝ հաջորդական լրացումների, վերացման կամ ձևափոխումների հավաքական արդյունքից բխող որևէ էական փոփոխություն, որը հանգեցնում է տվյալների բազայի համար որակական կամ քանակական էական նոր ներդրումների, համարվում է որպես այդ ներդրումից բխող նոր տվյալների բազա:

Հոդված 115. Տվյալների բազայի պահպանությունը

1. Սույն գլխով նախատեսված տվյալների բազայի պահպանությունը կիրառվում է՝

1) տվյալների բազայի ամբողջ պարունակության նկատմամբ.

2) դրա պարունակության որակապես կամ քանակապես յուրաքանչյուր էական մասի նկատմամբ.

3) դրա պարունակության որակապես կամ քանակապես ոչ էական մասերի նկատմամբ, երբ դրանք օգտագործվում են կրկնվող և հետևողական ձևով, որը հակասում է տվյալների բազայի բնականոն օգտագործման պահանջներին կամ անհիմն վնասում է տվյալների բազա պատրաստողի օրինական շահերը:

2. Սույն գլխով նախատեսված պահպանությունը չի կիրառվում էլեկտրոնային տվյալների բազաների պատրաստման կամ շահագործման համար օգտագործված համակարգչային ծրագրերի նկատմամբ:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պահպանությունը կիրառվում է

տվյալների բազայի կամ դրա պարունակության նկատմամբ՝ անկախ տվյալների բազայի պարունակության նկատմամբ հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների պահպանությունից և չի վնասում տվյալների բազայի պարունակության նկատմամբ գոյություն ունեցող իրավունքները:

Հոդված 116. Տվյալների բազա պատրաստողի իրավունքները

1. Տվյալների բազա պատրաստողը բացառիկ իրավունք ունի արգելելու կամ թույլատրելու իր ՝

1) տվյալների բազայի վերարտադրությունը.

2) տվյալների բազայի օրինակների տարածումը.

3) տվյալների բազայի օրինակների վարձույթով տալը.

4) տվյալների բազան հանրությանը մատչելի դարձնելը.

5) տվյալների բազայի հաղորդումը հանրությանը այլ ձևերով:

2. Տվյալների բազայի օրինակների նկատմամբ հետագա վաճառքը վերահսկելու իրավատիրոջ իրավունքը սպառվում է Հայաստանի Հանրապետությունում, եթե դրանք հեղինակի կողմից կամ նրա համաձայնությամբ քաղաքացիական շրջանառության մեջ են դրվել Հայաստանի Հանրապետությունում կամ այլ երկրում, որի հետ գործում է ընդհանուր շուկայի կամ ընդհանուր մաքսային սահմանի մասին Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիր:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքներն օրենքով սահմանված կարգով պայմանագրով ամբողջությամբ կամ մասնակիորեն, կարող են փոխանցվել զիջման պայմանագրով այլ անձի կամ տրամադրվել լիցենզային պայմանագրով:

Հոդված 117. Տվյալների բազայի օրինական օգտագործողների իրավունքներն ու պարտականությունները

1. Հրապարակված տվյալների բազայի կամ դրա օրինակի օրինական օգտագործողն ազատ է օգտագործել դրա պարունակության որակական կամ քանակական ոչ էական մասերը ցանկացած նպատակով:

2. Եթե տվյալների բազայի օրինական օգտագործողն իրավասու է օգտագործել

տվյալների բազայի միայն մի մասը, ապա սույն հոդվածը կիրառվում է միայն այդ մասի նկատմամբ:

3. Հրապարակված տվյալների բազայի կամ դրա օրինակի օրինական օգտագործողը չի կարող կատարել գործողություններ, որոնք հակասում են տվյալների բազայի բնականոն օգտագործման պահանջներին կամ անհիմն կերպով վնասում են տվյալների բազա պատրաստողի օրինական շահերը:

4. Հրապարակված տվյալների բազայի կամ դրա օրինակի օրինական օգտագործողը չպետք է վնասի տվյալների բազայում ընդգրկված ստեղծագործությունների կամ հարակից իրավունքների օբյեկտների նկատմամբ հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջ շահերը:

5. Սույն հոդվածին հակասող պայմանագրի ցանկացած դրույթ առոչինչ է:

Հոդված 118. Տվյալների բազայի նկատմամբ իրավունքների սահմանափակումները

1. Ցանկացած ձևով հրապարակված տվյալների բազայի օրինական օգտագործողն առանց տվյալների բազա պատրաստողի թույլտվության կարող է կոմպիլյացնել կամ ազատ օգտագործել դրա պարունակության էական մասը հետևյալ դեպքերում՝

1) եթե ոչ էլեկտրոնային տվյալների բազայի պարունակությունն օգտագործվում է անձնական նպատակով.

2) եթե տվյալների բազայի պարունակությունն օգտագործվում է ուսուցման կամ գիտական հետազոտության լուսաբանման նպատակներով՝ ոչ առևտրային նպատակնով.

3) եթե տվյալների բազայի պարունակությունն օգտագործվում է հասարակության անվտանգության կամ վարչական, խորհրդարանական, դատական կամ արբիտրաժային ընթացակարգերի պատշաճ ընթացքի ապահովման կամ լուսաբանման նպատակներով:

Հոդված 119. Տվյալների բազայի պահպանության ժամկետը

1. Տվյալների բազա պատրաստողի իրավունքները ծագում են տվյալների բազայի պատրաստումն ավարտելու պահից և գործում են 15 տարի:

2. Եթե սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում տվյալների բազան օրինական ճանապարհով հրապարակվել է, ապա պահպանության ժամկետը գործում է 15 տարի՝ առաջին հրապարակման պահից:

3. Տվյալների բազայի պարունակության որևէ որակական կամ քանակական էական փոփոխություն (ներառյալ տվյալների բազայի հաջորդական լրացումների հավաքումը, ջնջումը կամ փոփոխությունը), որը հանգեցնում է որակական կամ քանակական էական նոր ներդրման, համարվում է որպես այդ ներդրումից բխող նոր տվյալների բազա՝ իր պահպանության ժամկետով:

ԳԼՈՒԽ 15
ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿՈԼԵԿՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հոդված 120. Գույքային իրավունքների կառավարումը

1. Հեղինակը, կատարողը, ինչյունագիր արտադրողը, տեսագրություն արտադրողը, ինչպես նաև հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների այլ իրավատերն ազատ է որոշելու իր գույքային իրավունքները կառավարել անհատական կարգով կամ կոլեկտիվ հիմունքներով, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված իրավունքների անհատական կարգով կառավարումը հեղինակն իրականացնում է անձամբ կամ ներկայացուցչի միջոցով:

3. Սույն հոդվածի 1-ին մասում նշված իրավունքների կոլեկտիվ հիմունքներով կառավարումն իրականացվում է գույքային իրավունքները կոլեկտիվ կառավարող կազմակերպությունների (այսուհետ՝ կոլեկտիվ կառավարման կազմակերպություն) միջոցով:

Հոդված 121. Կոլեկտիվ կառավարման կազմակերպության ստեղծումը

1. Հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատերերն իրենց գույքային իրավունքների կառավարումն ապահովելու նպատակով ստեղծում են

կոլեկտիվ կառավարման ինքնակարգավորվող ոչ առևտրային կազմակերպություններ:

2. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը սույն օրենքով սահմանված, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության կամ գտնվելու վայր ունեցող իրավատերերի կողմից վերապահված լիազորությունների հիման վրա, որպես միակ նպատակ, իրականացնում է հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների օբյեկտների նկատմամբ գույքային իրավունքների կառավարում:

3. Գույքային իրավունքների կոլեկտիվ հիմունքներով կառավարումը կարող է իրականացնել՝

1) տարբեր կատեգորեաների օբյեկտների նկատմամբ մեկ իրավունք՝ մեկ կոլեկտիվ կառավարման կազմակերպության միջոցով, կամ

2) մեկ կատեգորիայի օբյեկտի նկատմամբ տարբեր իրավունքներ՝ մեկ կոլեկտիվ կառավարման կազմակերպության միջոցով, կամ

3) տարբեր կատեգորիաների օբյեկտների նկատմամբ տարբեր իրավունքներ՝ մեկ կոլեկտիվ կառավարման կազմակերպության միջոցով:

4. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունն իրականացնում է հրապարակված ռեպերտուարի նկատմամբ հեղինակային իրավունքի ու հարակից իրավունքների կառավարումն իր անունից և ի շահ իր անդամների:

5. Իրավատերերի կողմից լիազորությունները վերապահվում են կոլեկտիվ կառավարման լիազորություններ վերապահող պայմանագրով, որը կնքվում է գրավոր՝ կոլեկտիվ կառավարման կազմակերպության և իրավատերերի, ինչպես նաև կոլեկտիվ կառավարման կազմակերպությունների միջև (ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ՝ օտարերկրյա պետությունների): Իրավատերերի հետ կնքվող պայմանագրում նշվում է ռեպերտուարը, որի նկատմամբ գույքային իրավունքները հանձնվում են կառավարման:

6. Սույն գլխի իմաստով՝ ռեպերտուար է համարվում որոշակի իրավունքներով պահպանվող հրապարակված այն օբյեկտների (երաժշտական, տեսալսողական, դրամատիկական, երաժշտա-դրամատիկական, կերպարվեստի և այլ ստեղծագործությունների, հարակից իրավունքների) ցանկը, որոնց նկատմամբ

գույքային իրավունքների կառավարումն իրականացնում է կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը (այսուհետ՝ ռեպերտուար):

7. Կոլեկտիվ կառավարման կազմակերպության անդամ նշանակում է իրավատեր կամ իրավատերերին ներկայացնող կազմակերպություն, ներառյալ այլ կոլեկտիվ կառավարման կազմակերպություններ և իրավատերերի ասոցիացիաներ, որոնք համապատասխանում են կոլեկտիվ կառավարման կազմակերպության անդամակցության պայմաններին (այսուհետ՝ անդամ):

8. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը գործունեությունն իրականացնում է հավատարմագրվելուց հետո: Հավատարմագրման գործընթացն իրականացնում է պետական կառավարման համակարգի մարմինը, որի մտավոր սեփականության պահպանության հետ կապված, ինչպես նաև սույն օրենքով նախատեսված այլ գործառույթները, սույն օրենքով նախատեսված կարգով իրականացնում է այդ մարմնի մտավոր սեփականության գրասենյակը (այսուհետ՝ պետական լիազոր մարմին): Կոլեկտիվ կառավարման կազմակերպության հավատարմագրման կարգը և ժամկետները հաստատում է Կառավարությունը:

Հոդված 122. Կոլեկտիվ կառավարման կազմակերպության գործառույթները

1. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունն իրականացնում է հրապարակված ռեպերտուարի նկատմամբ գույքային իրավունքների կառավարում, մասնավորապես՝

1) կնքում է պայմանագրեր օգտագործողների հետ ստեղծագործությունների օգտագործման թույլտվության և վարձատրություն ստանալու վերաբերյալ, համաձայնեցնում օգտագործողների հետ վարձատրության չափը և պայմանագրի այլ պայմաններ.

2) կնքում է փոխադարձ պահպանության համաձայնագրեր օտարերկրյա պետություններում գործող նմանատիպ կազմակերպությունների հետ.

3) ստուգում է օգտագործողների՝ վարձատրության հաշվարկին վերաբերող փաստաթղթերը և վերահսկում է ռեպերտուարի օգտագործումը.

4) հաշվարկում և հավաքում է հեղինակների՝ ռեպերտուարի օգտագործումից առաջացած վարձատրությունը.

5) բաշխում է իրավատերերին հասանելիք գումարները.

6) ներկայացնում է իր՝ անդամ հանդիսացող և օտարերկրյա իրավատերերի շահերը բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, պետական և ոչ պետական կազմակերպություններում, ֆիզիկական անձանց հետ հարաբերություններում.

7) հավաքում, բաշխում ու վճարում իրականացնելիս առաջացած փաստացի ծախսերը ծածկելու համար հավաքված գումարներից, որպես կառավարման վճար, իր կանոնադրությամբ սահմանված կարգով կատարում է գանձումներ: Այդ ծախսերը պետք է լինեն հիմնավորված ու փաստաթղթերով հաստատված:

2. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունն ի պահ է վերցնում հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների օբյեկտները և տալիս համապատասխան փաստաթուղթ:

3. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունն իրավատերերի ու օգտագործողների համար ստեղծում է էլեկտրոնային միջոցներով հաղորդակցվելու հնարավորություն՝ իրենց իրավունքների իրականացման և, համապատասխան դեպքերում, ռեպերտուարի օգտագործման վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով: Մասնավորապես, Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը պարտավոր է՝

1) ստեղծել (սահմանել) պաշտոնական կայք՝ «Ինտերնետ» տեղեկատվական հեռահաղորդակցական ցանցում իր գործունեության վերաբերյալ տեղեկատվություն տեղադրելու (հրապարակելու) համար (այսուհետ՝ պաշտոնական կայք).

2) ապահովել պաշտոնական կայքի հասանելիությունը շուրջօրյա ռեժիմով, պաշտոնական կայքում տեղադրվող տեղեկատվության հրապարակայնությունը, ինչպես նաև այդպիսի տեղեկատվության անհատույց տրամադրումը.

3) ձևավորել այնպիսի գրանցամատյաններ, որոնք պարունակում են տեղեկություններ՝ իրավատերերի, հեղինակային և (կամ) հարակից իրավունքների օբյեկտների ու այդպիսի կազմակերպության կառավարմանը փոխանցված իրավունքների վերաբերյալ (այսուհետ՝ գրանցամատյաններ)՝ բացառությամբ այնպիսի տեղեկությունների, որոնք օրենքին համապատասխան, չեն կարող հրապարակվել՝ առանց իրավատիրոջ համաձայնության.

4) տեղադրել գրանցամատյանները պաշտոնական կայքում, ինչպես նաև իրականացնել դրանց վարումն ու ժամանակին թարմացումը՝ օգտագործողների հետ պայմանագրեր կնքելու և վարձատրությունը վճարելու նպատակով.

5) ներդնել այնպիսի ընթացակարգեր, որոնց միջոցով կոլեկտիվ հիմունքներով կառավարող մյուս կազմակերպությունները, ինչպես նաև այն իրավատերերը, ի շահ որոնց կազմակերպությունը կնքում է պայմանագրեր օգտագործողների հետ, կկարողանան ծանուցել գրանցամատյաններում առկա և նրա կողմից կառավարվող իրավունքներին առնչվող ցանկացած անճշտության մասին:

Հոդված 123. Ընդլայնված կոլեկտիվ կառավարումը

1. Հավատարմագրված կոլեկտիվ կառավարման կազմակերպությունն իր իրավասության շրջանակներում՝ իր կանոնադրությամբ սահմանված գրավոր կարգով ծանուցելուց հետո իրականացնում է նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կամ Հայաստանի Հանրապետության տարածքում մշտական բնակության վայր ունեցող այն իրավատերերի պարտադիր կոլեկտիվ կառավարման ենթակա գույքային իրավունքների կառավարումը, ովքեր չեն հրաժարվել գույքային իրավունքների կառավարումից: Իրավատերը, ով հավատարմագրված կոլեկտիվ կառավարման կազմակերպության հետ պարտադիր կոլեկտիվ կառավարման ենթակա գույքային իրավունքների կառավարման լիազորություններ տրամադրելու վերաբերյալ գրավոր պայմանագիր չի կնքել, իրավասու է ցանկացած պահի, գրավոր ծանուցում ներկայացնելու միջոցով, ամբողջական կամ մասնակի հրաժարվել հավատարմագրված կոլեկտիվ կառավարման կազմակերպության կողմից իր իրավունքների կառավարումից: Սույն օրենքով սահմանված անդամակցության դադարեցման պայմանների վերաբերյալ դրույթը այնքանով, որքանով կիրառելի է (mutatis mutandis) կիրառվում է կոլեկտիվ կառավարման կազմակերպության անդամ չհանդիսացող իրավատերերի նկատմամբ:

2. Այն ժամանակահատվածում, որի ընթացքում անդամ չհանդիսացող իրավատերերի պարտադիր կոլեկտիվ կառավարման ենթակա գույքային իրավունքների կառավարումն իրականացվում է կոլեկտիվ կառավարման

կազմակերպության կողմից, նրանք՝ այնքանով, որքանով կիրառելի է (mutatis mutandis), օգտվում են կոլեկտիվ կառավարման կազմակերպության անդամների սույն օրենքով նախատեսված իրավունքներից:

3. Սույն հոդվածը չի կիրառվում տեսալսողական ստեղծագործությունների արբանյակային կապով հեռարձակման վրա:

Հոդված 124. Պարտադիր կոլեկտիվ կառավարման ենթակա իրավունքները

1. Կոլեկտիվ հիմունքներով պարտադիր կառավարման ենթակա է՝

1) լույսընծայված հնչյունագրի, տեսագրության, հնչյունագրի կամ տեսագրության մեջ ամրագրված կատարման՝ հեռարձակման կամ հանրությանը հաղորդելու իրավունքը համաձայն սույն օրենքի 104-րդ հոդվածի.

2) հնչյունագիրը, տեսագրությունը կամ տեսալսողական ստեղծագործությունը վարձույթով տալու դեպքում վարձատրություն ստանալու իրավունքը, որը հեղինակները և կատարողները պահպանում են նույնիսկ այն դեպքում, երբ վարձույթով տալու իրավունքը պայմանագրով փոխանցել են հնչյունագիր, տեսագրություն կամ տեսալսողական ստեղծագործության արտադրողներին.

3) ստեղծագործության, կատարման, հնչյունագրի կամ տեսագրության մալուխով վերահաղորդման իրավունքը, բացառությամբ, երբ մալուխային վերահաղորդման իրավունքն իրականացվում է հեռարձակող կազմակերպության կողմից իր սեփական հեռարձակումների համար՝ անկախ նրանից՝ այդ իրավունքները իր սեփական իրավունքներն են, թե փոխանցվել են իրեն հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների այլ իրավատերերի կողմից.

4) կերպարվեստի ստեղծագործության վերավաճառքի իրավունքը:

2. Սույն հոդվածը չի կիրառվում ստեղծագործությունների արբանյակային կապով հեռարձակման վրա:

3. Սույն հոդվածի 1-ին մասը կիրառվում է այն դեպքում, երբ առկա է հավատարմագրված կոլեկտիվ կառավարման կազմակերպություն:

Հոդված 125. Կոլեկտիվ կառավարման կազմակերպության հավատարմագրման պայմաններն ու ընթացակարգը

1. Որպես կոլեկտիվ կառավարման կազմակերպություն կարող է հավատարմագրվել ցանկացած ինքնակարգավորվող ոչ առևտրային իրավաբանական անձ, որն ունի՝

1) սույն օրենքով սահմանված պահանջներին համապատասխանող կանոնադրություն,

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կամ Հայաստանի Հանրապետության տարածքում մշտական բնակության վայր ունեցող որոշակի իրավատերերի գրանցամատյան (տվյալների բազա),

3) համապատասխան անձնակազմ և տեխնիկական միջոցներ (տեղեկատվական տեխնոլոգիաների և հաղորդակցման սարքավորումներ, ծրագրային ապահովում, տվյալների բազաներ, անհրաժեշտ տարածքներ և այլն) իրավունքների կոլեկտիվ կառավարումն արդյունավետ, պատշաճ և թափանցիկ իրականացնելու համար,

4) հեղինակային վարձատրության և (կամ) հարակից իրավունքների իրավատերերի վարձատրության հավաքագրման, բաշխման և վճարման մեխանիզմներ,

5) իրավատերերի ու օգտագործողների համար ստեղծված էլեկտրոնային միջոցներով հաղորդակցվելու հնարավորություն:

2. Հավատարմագրման գործընթացը պետական լիազոր մարմինն իրականացնում է ցանկացած ինքնակարգավորվող ոչ առևտրային իրավաբանական անձի դիմումի հիման վրա, որի մեջ նշվում են կոլեկտիվ կառավարման ենթակա իրավունքները: Դիմումին կից ներկայացվում են համապատասխան փաստաթղթեր, որոնք հիմնավորում են սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջները:

3. Հավատարմագրման դիմումի և դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության համար ստեղծվում է հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով), որի անհատական կազմը և անդամների քանակը հաստատում է պետական կառավարման համակարգի մարմնի ղեկավարը: Հանձնաժողովի կազմում պարտադիր ընդգրկվում է մշակույթի ոլորտում լիազորված պետական մարմնի ներկայացուցիչը, ինչպես նաև կարող են ընդգրկվել այլ մասնագետներ: Փաստաթղթերի ուսումնասիրությունն իրականացվում է այն ստանալու օրվանից

մեկամսյա ժամկետում: Հանձնաժողովը փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում տալիս է հավատարմագրման համար օրենքով սահմանված պահանջների համապատասխանության (դրական եզրակացություն) կամ անհամապատասխանության մասին եզրակացություն:

4. Հանձնաժողովի եզրակացության հիման վրա պետական կառավարման համակարգի մարմնի ղեկավարը մեկամսյա ժամկետում որոշում է կայացնում հավատարմագրման կամ հավատարմագրումը մերժելու մասին:

5. Պետական կառավարման համակարգի մարմնի ղեկավարը հավատարմագրման մասին որոշում է կայացնում, եթե Հանձնաժողովի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝

1) կազմակերպության կանոնադրությունը համապատասխանում է սույն օրենքով սահմանված պահանջներին,

2) վարձատրության հաշվարկման, հավաքագրման, բաշխման կարգը չի հակասում սույն օրենքի դրույթներին,

3) սույն օրենքով նախատեսված իր գործառույթներն իրականացնելու համար կոլեկտիվ կառավարման կազմակերպությունն ունի համապատասխան տեխնիկական միջոցներ և անձնակազմ,

4) Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության կամ գտնվելու վայր ունեցող իրավատերերի որոշակի ռեպերտուարի համար ունի գրանցամատյաններ,

5) ստեղծել է իրավատերերի ու օգտագործողների համար ստեղծված էլեկտրոնային միջոցներով հաղորդակցվելու հնարավորություն:

6. Պետական կառավարման համակարգի մարմնի ղեկավարը հավատարմագրումը մերժելու մասին որոշում է կայացնում, եթե Հանձնաժողովի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված պայմաններին, ինչպես նաև հավատարմագրման կարգին:

7. Հանձնաժողովի կողմից տրված մեկից ավելի դրական եզրակացության դեպքում, Պետական կառավարման համակարգի մարմնի ղեկավարը որոշումը

կայացնում է հաշվի առնելով Հանձնաժողովի անդամների քվեարկության արդյունքները:

Հոդված 126. Հավատարմագրի տրամադրումը և դրա գործողության ժամկետը

1. Սույն օրենքի 125-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշում ընդունելու դեպքում պետական լիազոր մարմինը հնգօրյա ժամկետում կոլեկտիվ կառավարման կազմակերպությանը տալիս է հավատարմագիր: Հավատարմագրի ձևը և դրանում ընդգրկվող տեղեկությունների ցանկը սահմանում է Կառավարությունը:

2. Հավատարմագրի գործողության ժամկետը հինգ տարի է, որը հաշվարկվում է սույն օրենքի 125-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հավատարմագրման մասին որոշման հիման վրա հավատարմագրի տրման օրվանից:

3. Հավատարմագրի գործողության ժամկետը կարող է երկարաձգվել բազմակի անգամ, ամեն անգամ 5 տարի ժամկետով՝ պետական լիազոր մարմին ներկայացված դիմումի հիման վրա: Դիմումը ներկայացվում է հավատարմագրի գործողության ընթացիկ ժամկետի վերջին 3 ամսվա ընթացքում, որին կից ներկայացվում են սույն օրենքի 124–րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների վերաբերյալ տեղեկություններ:

4. Սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն ներկայացված դիմումների նկատմամբ կիրառվում են սույն օրենքի 125-րդ հոդվածի դրույթները՝ այնքանով, որքանով կիրառելի է (mutatis mutandis):

5. Սույն օրենքի 125-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված՝ կոլեկտիվ կառավարման կազմակերպությանը հավատարմագրումը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում պետական լիազոր մարմինը մերժման մասին որոշումը հնգօրյա ժամկետում տրամադրում է դիմում ներկայացրած կազմակերպությանը:

6. Պետական կառավարման համակարգի մարմնի որոշումները ենթակա են անհապաղ կատարման և կարող են բողոքարկվել դատական կարգով:

Հոդված 127. Կոլեկտիվ կառավարման կազմակերպության նկատմամբ պետական վերահսկողությունը

1. Պետական կառավարման համակարգի մարմինը վերահսկողություն է իրականացնում կոլեկտիվ կառավարման կազմակերպության գործունեության նկատմամբ՝ սույն օրենքի և հավատարմագրման պայմանների պահպանման նկատմամբ:

2. Կոլեկտիվ կառավարման կազմակերպության գործունեության վերաբերյալ պետական կառավարման համակարգի մարմինը կարող է կոլեկտիվ կառավարման կազմակերպությունից պահանջել տեղեկություն գործունեության վերաբերյալ, բանավոր կամ գրավոր բացատրություն:

3. Պետական կառավարման համակարգի մարմինն իրավասու չէ լուծել կոլեկտիվ կառավարման կազմակերպության և նրա անդամների, ինչպես նաև կոլեկտիվ կառավարման կազմակերպության և օգտագործողների միջև ծագած վեճերը:

4. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը սեփական նախաձեռնությամբ, կանոնավոր, պատշաճ կերպով տեղեկություններ է ներկայացնում պետական կառավարման համակարգի մարմին իր կանոնադրության կամ գործունեության որևէ փոփոխության վերաբերյալ մեկամսյա ժամկետում, որոնք կարգավորվում են սույն օրենքով:

Հոդված 128. Խախտումների վերացումը

1. Եթե պետական կառավարման համակարգի մարմինը պարզում է, որ կոլեկտիվ կառավարման կազմակերպության գործունեությունը չի համապատասխանում սույն օրենքով սահմանված պահանջներին, ապա իր որոշմամբ կազմակերպությանը պարտավորեցնում է եռամսյա ժամկետում վերացնել հայտնաբերված խախտումները:

2. Հիմնավոր պատճառների առկայության դեպքում պետական կառավարման համակարգի մարմինը կարող է կոլեկտիվ կառավարման կազմակերպության դիմումի հիման վրա երկարաձգել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետը:

3. Սույն հոդվածով նախատեսված միջոցառումները պետք է լինեն արդյունավետ և համաչափ:

Հոդված 129. Հավատարմագրի գործողության դադարեցումը

1. Պետական կառավարման համակարգի մարմինն իր որոշմամբ դադարեցնում է կոլեկտիվ կառավարման կազմակերպությանը տրամադրված հավատարմագրի գործողությունը, եթե՝

1) առաջացել են այնպիսի հանգամանքներ, որոնք սույն օրենքի համաձայն հավատարմագրումը մերժելու հիմք են հանդիսանում.

2) կոլեկտիվ կառավարման կազմակերպությունն առնվազն երեք հաջորդական անգամ սահմանված ժամկետներում չի վերացրել պետական կառավարման համակարգի մարմնի կողմից հայտնաբերված խախտումները,

2. Պետական կառավարման համակարգի մարմինը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված իր որոշման մեջ սահմանում է հավատարմագրի գործողության դադարեցման ուժի մեջ մտնելու ժամկետն այնպես, որ կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը հնարավորություն ունենա արդեն հավաքագրված գումարները բաշխել իրավատերերի միջև: Պետական կառավարման համակարգի մարմինը հավատարմագրի գործողության դադարեցման որոշման կայացումից հետո մինչև գործողության դադարեցումը ուժի մեջ մտնելը կազմակերպում է նոր հավատարմագրման գործընթացի իրականացումը՝ սույն օրենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 16
ԿՈԼԵԿՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

Հոդված 130. Պայմանագիր կնքելու պարտավորությունը

1. Որոշակի կատեգորիայի իրավատիրոջ դիմումի հիման վրա կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը պարտավոր է նրա հետ կնքել նույնատիպ պայմաններով պայմանագիր, ինչպիսին կնքել է նույն կատեգորիայի այլ անդամների հետ:

2. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունն իրավատերերին ընդունում է որպես անդամներ, եթե նրանք համապատասխանում են անդամակցության չափորոշիչներին: Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը կարող է մերժել անդամակցության դիմումը միայն օբյեկտիվ չափորոշիչների հիման վրա, որոնք սահմանվում են կոլեկտիվ կառավարման կազմակերպության կանոնադրությամբ:

3. Իրավատերերը համաձայնություն են տալիս յուրաքանչյուր իրավունքի կամ իրավունքների կատեգորիայի կամ հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների օբյեկտների տեսակների համար, որի համար լիազորում են կոլեկտիվ կառավարման կազմակերպությանը: Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը դա հավաստում է իրավատերերի հետ կնքվող պայմանագրով:

4. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը իրավատերերին տեղեկացնում է իր կանոնադրությամբ սահմանված անդամակցության կամ պայմանագրի կնքման չափորոշիչների մասին՝ նախքան նրանցից իրավունքների կառավարման լիազորություն ստանալը:

Հոդված 131. Իրավատերերի իրավունքները

1. Իրավատերը կարող է կոլեկտիվ կառավարման կազմակերպությանը լիազորել կառավարելու իր իրավունքները, իրավունքների կատեգորիաները կամ հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների օբյեկտների տեսակները՝ անկախ իր քաղաքացիությունից, մշտական բնակության կամ գտնվելու վայրից:

2. Իրավատերն իրավունք ունի դադարեցնել իր իրավունքների, իրավունքների կատեգորիաների կամ հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների օբյեկտների տեսակների կառավարման լիազորությունը կամ իր ընտրությամբ սահմանափակել որոշակի իրավունքների, իրավունքների կատեգորիաների կամ հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների օբյեկտների տեսակների կառավարումը՝ ծանուցելով այդ մասին կոլեկտիվ կառավարման կազմակերպությանը ոչ ուշ քան 6 ամիս առաջ: Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը կարող է որոշել, որ այսպիսի դադարեցումը կամ սահմանափակումը ուժի մեջ է մտնում ֆինանսական տարվա կեսին կամ վերջին՝ կախված ծանուցման ժամկետի ավարտից:

3. Եթե առկա են իրավատիրոջը հասանելիք գումարներ, որոնք գոյացել են

նախքան սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն լիազորության դադարեցման կամ իրավունքների սահմանափակման ուժի մեջ մտնելը տեղի ունեցած օգտագործումից կամ իրավունքների փոխանցումից, ապա իրավատերը պահպանում է անդամակցության իր իրավունքները այդպիսի օգտագործումների նկատմամբ:

4. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը խտրականություն չի դնում իր անդամների և այն իրավատերերի միջև, ում իրավունքները կառավարում է մեկ այլ կոլեկտիվ կառավարման կազմակերպության հետ կնքած ներկայացուցչական պայմանագրի հիման վրա, մասնավորապես՝ կիրառվող դրույքաչափերի, կառավարման վճարների և իրավունքների օգտագործումից ստացված եկամուտների հավաքագրման և իրավատերերին հասանելիք գումարների բաշխման պայմանների վերաբերյալ:

Հոդված 132. Անդամակցության կանոնները

1. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը գործում է ի շահ իր անդամների և չի սահմանում նրանց համար այնպիսի պարտավորություններ, որոնք անհրաժեշտ չեն նրանց իրավունքների և շահերի պաշպանության համար:

2. Անդամները ժամանակին և պատշաճ կերպով տեղեկացնում են կոլեկտիվ կառավարման կազմակերպությանը իրենց հրապարակված ստեղծագործությունների կամ հարակից իրավունքների օբյեկտների, դրանց նկատմամբ իրենց իրավունքների և այլ տվյալների վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են իրենց իրավունքների կառավարման համար:

3. Կոլեկտիվ կառավարման կազմակերպության կանոնադրությամբ նախատեսվում են համապատասխան և արդյունավետ մեխանիզմներ՝ կազմակերպության որոշումներին անդամների մասնակցությունն ապահովելու համար: Կոլեկտիվ կառավարման կազմակերպության որոշումների ընդունման հարցում տարբեր կատեգորիայի իրավատերերի մասնակցությունը պետք է լինի արդարացի և հավասար:

4. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունն իրականացնում է իր անդամների հաշվառում, որը մշտապես թարմացվում է:

Հոդված 133. Կոլեկտիվ կառավարման կազմակերպության կառավարումը

1. Կոլեկտիվ կառավարման կազմակերպության կառավարումն իրականացվում է սույն օրենքին, այլ իրավական ակտերին և իր կանոնադրությանը համապատասխան:

2. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը պետք է ունենա իրավատերերի խորհուրդ, որը պետք է բաղկացած լինի առնվազն յոթ անդամից: խորհրդի անդամները պետք է լինեն կազմակերպության անդամ:

3. Իրավատերերի խորհուրդի անդամները ընտրվում են կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով՝ հինգ տարի ժամկետով: Գլխավոր տնօրենը ընտրվում է իրավատերերի խորհրդի կողմից երեք տարի ժամկետով:

4. Իրավատերերի խորհուրդը և գլխավոր տնօրենը պարտավոր են կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը կառավարել թափանցիկ, արդյունավետ և ողջամիտ կերպով՝ օգտագործելով վարչական, հաշվապահական արդյունավետ ընթացակարգեր և ներքին վերահսկողության մեխանիզմներ:

5. Այն դեպքում, երբ մեկ կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը հավատարմագրվում է տարբեր կատեգորիաների օբյեկտների նկատմամբ մեկ իրավունքի կամ տարբեր իրավունքների կառավարման համար, ապա սույն հոդվածի 2-րդ մասում նշված իրավատերերի խորհրդի անդամները ընտրվում են բոլոր կատեգորիաների օբյեկտների իրավատերերից:

Հոդված 134. Իրավատերերի խորհրդի լիազորությունները

1. Իրավատերերի խորհուրդն իրավասու է՝

1) հաստատել վարձատրության հաշվարկման, հավաքագրման, բաշխման կարգը,

2) հաստատել իրավատերերի և օգտագործողների հետ կնքվող պայմանագրերի օրինակելի ձևերը,

3) սահմանել դրույքաչափեր և առանձին գործողությունների համար վճարներ,

4) հաստատել իրավատերերի գրանցման ու գրանցամատյանների վարման կարգը,

5) իրականացնել կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 135. Կոլեկտիվ կառավարման կազմակերպության կանոնադրությունը

1. Կոլեկտիվ կառավարման կազմակերպության կանոնադրությամբ սահմանվում է մասնավորապես՝

1) կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը,

2) կառավարվող ռեպերտուարը,

3) անդամակցության կամ պայմանագրերի կնքման չափորոշիչները (մերժման հիմքերը, անդամակցության դադարեցման պայմանները),

4) անդամների անձնական տվյալների պահպանության կարգը,

5) իրավատերերի խորհրդի անդամների ընտրության կարգն ու ժամկետները, նիստերի գումարման և քվեարկության կարգը,

6) ռեպերտուարի օգտագործման դիմաց վարձատրության դրույքաչափերի ընդունման կարգը,

7) առանձին գործողությունների համար վճարների սահմանման կարգը,

8) ռեպերտուարի օգտագործման դիմաց վարձատրության բաշխման կարգը,

9) ռեպերտուարի օգտագործման դիմաց ստացված վարձատրություններից կառավարման վճարներ գանձելու կարգը,

10) ներքին վերահսկողական մեխանիզմների վերաբերյալ կանոնները,

11) կազմակերպության վերակազմակերպման կամ լուծարման կարգը,

12) այլ դրույթներ, որոնք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

2. Հավատարմագրվելուց հետո, կոլեկտիվ կառավարման կազմակերպության կանոնադրության մեջ կատարված փոփոխությունների և լրացումների վերաբերյալ պետք է մեկամսյա ժամկետում տեղեկացվի պետական կառավարման համակարգի մարմնին:

Հոդված 136. Վարձատրության բաշխման հիմքերը, բաշխումն ու վճարումը

1. Ռեպերտուարի օգտագործման դիմաց ստացված վարձատրության բաշխումը և վճարումը կոլեկտիվ կառավարման կազմակերպությունն իրականացնում է իր կանոնադրությամբ նախատեսված կարգի համաձայն:

2. Բաշխման համար հիմք է հանդիսանում որոշակի ռեպերտուարի փաստացի օգտագործման չափը (համաչափության սկզբունք): Փաստացի օգտագործումը որոշվում է արժանահավատ տվյալների հիման վրա:

3. Ռեպերտուարի օգտագործման դիմաց ստացված վարձատրությունը կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը բաշխում և վճարում է կանոնավոր, պատշաճ և ճշգրիտ՝ հավասար մոտեցում ապահովելով բոլոր իրավատերերի նկատմամբ:

4. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությանը չի թույլատրվում օգտագործել ստեղծագործությունների կամ հարակից իրավունքների օբյեկտների օգտագործման դիմաց ստացված վարձատրության գումարները, ինչպես նաև դրանց ներդրումներից գոյացած եկամուտը, բացառությամբ կառավարման համար նախատեսված կառավարման վճարների և ծախսերի:

5. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունն իր անդամների միջև վարձատրության գումարների բաշխումն ու վճարումը կատարում է 6 ամսից ոչ ուշ այն ֆինանսական տարվա ավարտից հետո, որի ընթացքում հավաքագրվել է ստեղծագործությունների կամ հարակից իրավունքների օբյեկտների օգտագործումից ստացված գումարները, եթե առկա չեն օբյեկտիվ պատճառներ, ինչպիսիք են՝ օգտագործողների կողմից հաշվետվություններ չներկայացնելը, իրավունքների կամ իրավատերերի նույնականացված չլինելը, ռեպերտուարի վերաբերյալ տեղեկություններն իրավատերերի հետ պարզված չլինելը, որոնք խոչընդոտում են կազմակերպությանը՝ պահպանելու նշված ժամկետը:

6. Օտարերկրյա հեղինակներին կամ իրավատերերին հավաքված վարձատրության վճարման հաճախականությունը սահմանվում է օտարերկրյա կազմակերպությունների հետ կնքված ներկայացուցչական պայմանագրով, սակայն ոչ ավելի ուշ՝ քան տարին մեկ անգամ:

7. Տիրազուրկ ստեղծագործությունների օգտագործումից գոյացած վարձատրության բաշխման վերաբերյալ որոշումը կայացվում է կոլեկտիվ կառավարման կազմակերպության իրավատերերի խորհրդի կողմից՝ այն ֆինանսական տարվա ավարտից երեք տարի հետո, որի ընթացքում հավաքվել է այդ վարձատրությունը:

Հոդված 137. Կառավարման վճարները

1. Ստեղծագործությունների կամ հարակից իրավունքների օբյեկտների օգտագործումից ստացված վարձատրության նկատմամբ կիրառելի կառավարման վճարը նախօրոք համաձայնեցվում և ամրագրվում է կոլեկտիվ կառավարման կազմակերպության և յուրաքանչյուր անդամի միջև կնքվող պայմանագրում: Այդ կառավարման վճարները չեն կարող գերազանցել առանձին իրավատերերին հասանելիք գումարի 30 տոկոսը:

2. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը ստեղծագործությունների կամ հարակից իրավունքների օբյեկտների օգտագործումից գոյացած վարձատրություններից կարող է կատարել ֆինանսական օժանդակություններ՝ սոցիալական, մշակութային կամ կրթական նպատակներով (դրամական սոցիալական օգնություն անդամներին, կենսաթոշակային ֆոնդեր, կրթաթոշակներ, մշակութային միջոցառումների օժանդակություն և այլն): Այս օժանդակությունների տրամադրումը պետք է հիմնված լինի կոլեկտիվ կառավարման կազմակերպության կանոններով սահմանված արդար և ոչ խտրական չափորոշիչների վրա:

Հոդված 138. Կոլեկտիվ կառավարման կազմակերպության վերահսկողությունն իր անդամների կողմից

1. Կոլեկտիվ կառավարման կազմակերպության անդամները իրավունք ունեն, իրավատերերի խորհրդի միջոցով, վերահսկողություն իրականացնել կազմակերպության նկատմամբ՝ կանոնադրությամբ նախատեսված ներքին հսկողության մեխանիզմների հիման վրա: Իրավատերերի խորհրդում տարբեր կատեգորիայի անդամների ներկայացվածությունը պետք է լինի արդար և հավասարակշռված:

Հոդված 139. Կոլեկտիվ կառավարման կազմակերպության և իր անդամների միջև վեճերի կարգավորումը

1. Կոլեկտիվ կառավարման կազմակերպության անդամը կարող է բողոք ներկայացնել իրավատերերի խորհուրդ՝ կոլեկտիվ կառավարման կազմակերպության

կողմից իրեն վնաս պատճառող գործողությունների առնչությամբ, որոնք վերաբերում են իրավունքների կառավարման լիազորմանը, դրանց դադարեցմանը կամ հետկանչին, անդամակցության կամ պայմանագրի կնքման պայմաններին, վարձատրության հավաքագրմանը, կառավարման վճարների գանձմանն ու բաշխմանը: Իրավատերերի խորհուրդը բողոքը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում բողոքի վերաբերյալ կայացնում է պատճառաբանված որոշում գրավոր ձևով, որը եռօրյա ժամկետում ուղարկում է բողոք ներկայացրած անձին:

2. Բողոք ներկայացրած անձը կարող է իրավատերերի խորհրդի որոշումը բողոքարկել դատական կամ արբիտրաժային կարգով:

ԳԼՈՒԽ 17
ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈԼԵԿՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Հոդված 140. Օգտագործողների հետ պայմանագիր կնքելու պարտավորությունը

1. Առանձին օգտագործողի կամ մի քանի օգտագործողների դիմումի հիման վրա կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը պարտավոր է այլ օգտագործողներին համանման իրավունքի տրամադրման համանման պայմաններով նրանց հետ կնքել ռեպերտուարի օգտագործման համար ոչ բացառիկ լիցենզային պայմանագիր:

2. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը և օգտագործողները բանակցություններ են վարում իրավունքների տրամադրման, ներառյալ իրենց համապատասխան ծառայությունների մասով ամբողջական տեղեկատվության տրամադրման վերաբերյալ:

3. Իրավունքների տրամադրման պայմանները՝ մասնավորապես դրույքաչափերի մասով, պետք է հիմնված լինեն օբյեկտիվ չափանիշների վրա:

Հոդված 141. Օգտագործողների պարտավորությունները

1. Ռեպերտուարն օգտագործողները կոլեկտիվ կառավարման համապատասխան կազմակերպությանն են ներկայացնում հեղինակային իրավունքի

կամ հարակից իրավունքների փաստացի օգտագործված օբյեկտների ցանկը, իրավատերերին հասանելիք վարձատրության ճշգրիտ հաշվարկման ու բաշխման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը: Փաստաթղթերի ու տեղեկությունների ցանկն ու դրանք ներկայացնելու ժամկետները սահմանվում են կոլեկտիվ կառավարման կազմակերպության ու օգտագործողների միջեւ կնքվող պայմանագրերով:

2. Եթե ռեպերտուարն օգտագործվում է մի քանի օգտագործողների կողմից, ապա նրանք (անձը, ով օգտագործում է ռեպերտուարը, տարածքի՝ որտեղ օգտագործվում է ռեպերտուարը, սեփականատերը և վարձակալը, ինչպես նաև միջոցառման կազմակերպիչը, որի ընթացքում օգտագործվում է ռեպերտուարը) միասին և ամեն մեկն առանձին պատասխանատվություն են կրում սույն օրենքով նախատեսված իրենց պարտավորությունների համար:

3. Ռեպերտուարն օգտագործողն ապահովում է վարձատրության հաշվարկման համար անհրաժեշտ փաստաթղթերի ու տվյալների հասանելիությունը կոլեկտիվ կառավարման կազմակերպության կողմից լիազորված անձին:

Հոդված 142. Օգտագործողների հետ վեճերի կարգավորումը

1. Ցանկացած օգտագործող կամ օգտագործողների միություն կարող է ցանկացած ժամանակ բողոք ներկայացնել իրավատերերի խորհուրդ՝ լիցենզիաների տրամադրման պայմանների և մերժումների վերաբերյալ: Իրավատերերի խորհուրդը բողոքի վերաբերյալ կայացնում է հիմնավորված գրավոր որոշում՝ բողոքը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում:

2. Բողոք ներկայացրած անձը կարող է իրավատերերի խորհրդի որոշումը բողոքարկել դատական կամ արբիտրաժային կարգով:

ԳԼՈՒԽ 18
ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Հոդված 143. Վարձատրության դրույքաչափերը

1. Կոլեկտիվ կառավարման կազմակերպության կողմից դրույքաչափերն

ընդունվում են սույն հոդվածին համապատասխան:

2. Սույն հոդվածի համաձայն վարձատրության համար կիրառվող դրույքաչափերը սահմանվում են վարձատրության հաշվարկման մեթոդով և արդարացի վարձատրության գումարի տեսքով:

3. Վարձատրության հաշվարկման մեթոդի համար կիրառվում են հետևյալ ֆիքսված և փոփոխվող կանոնները.

1) տոկոս հասույթից (համախառն եկամուտից), որն օգտագործողը (օրինակ՝ համերգի պրոդյուսերներ, պարարվեստի դպրոցներ, դիսկոտեկներ և այլն) ստանում է ռեպերտուարի օգտագործմամբ պայմանավորված գործունեությունից.

2) տոկոս հասույթից (համախառն եկամուտից), որն օգտագործողը (օրինակ՝ հեռարձակող կազմակերպությունների հաղորդումներ, մալուխով վերահաղորդումներ և այլն) ստանում է ռեպերտուարի օգտագործմամբ պայմանավորված գործունեությունից, երբ հնարավոր չէ որոշել, թե հասույթի որ մասն է գոյանում ռեպերտուարի օգտագործումից.

3) տոկոս ռեպերտուարի օգտագործման համար համախառն ծախսերից, եթե օգտագործողը որևէ առևտրային նպատակ չի հետապնդում.

4) ռեպերտուարի օգտագործումից ստացված հասույթի համամասնական չափ՝ պահպանվող և չպահպանվող ռեպերտուարի համախառն օգտագործման դեպքում:

5) կոլեկտիվ կառավարվող իրավունքների համամասնական չափ՝ կոլեկտիվ հիմունքներով և անհատական կարգով կառավարվող ռեպերտուարի համախառն օգտագործման դեպքում.

6) առանձին իրավատիրոջ մասնաբաժնի համամասնական չափ, եթե մեկ ռեպերտուարի նկատմամբ առկա են մի քանի իրավատերեր.

7) որպես միանվագ գումար՝ ռեպերտուարի օգտագործման համար, եթե նման օգտագործումը պարտադիր պայման չէ օգտագործողի գործունեության համար (օրինակ՝ գեղեցկության սրահներ, առևտրի կենտրոններ և կետեր, հանրային սննդի օբյեկտներ և այլն), կամ եթե նման օգտագործումից ստացված հասույթը կամ ծախսերը չեն կարող ճշգրիտ կերպով որոշվել և (կամ) երբ այդ հասույթի որոշումը կպահանջի ոչ ողջամիտ ծախսեր:

4. Վարձատրության գումարի տեսքով հաշվարկման մեթոդի համար կիրառվում

են հետևյալ ֆիքսված և փոփոխվող գործոնները՝

1) առևտրային շրջանառության մեջ գտնվող իրավունքների և կոլեկտիվ կառավարման կազմակերպության կողմից տրամադրվող ծառայության տնտեսական արժեքը,

2) ռեպերտուարի օգտագործման տևողությունն ու քանակը,

3) հավանական հանդիսատեսների թիվն ու խտությունը տվյալ վայրում, տարածքում և տվյալ ժամանակահատվածում, տարածքի մակերեսը,

4) կոլեկտիվ կառավարվող որոշ իրավունքների պահանջվածությունը և արժեքը (թանկությունը).

5) օգտագործման նպատակը :

Հոդված 144. Վարձատրության նվազագույն դրույքաչափերը

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է վարձատրության նվազագույն դրույքաչափեր:

2. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը նվազագույն դրույքաչափերը հրապարակում է իր ինտերնետային կայքէջում:

3. Նվազագույն դրույքաչափերը պարտադիր են կոլեկտիվ կառավարման կազմակերպության և օգտագործողների համար, եթե վարձատրության համար նրանք ավելի բարձր գումարի վերաբերյալ համաձայնություն ձեռք չեն բերել: Ռեպերտուարն օգտագործողները պարտավոր են վճարել նվազագույն դրույքաչափերի չափով հավատարմագրված կոլեկտիվ կառավարող կազմակերպությանը անկախ պայմանագրի կնքումից:

ԳԼՈՒԽ 19

ԿՈԼԵԿՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 145. Իրավատերերին տրամադրվող տեղեկատվությունը

1. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը, առնվազն տարին մեկ անգամ, յուրաքանչյուր իրավատիրոջն էլեկտրոնային կամ այլ միջոցներով մատչելի է դարձնում հետևյալ տեղեկատվությունը որոշակի ժամանակահատվածի համար՝

1) ցանկացած անձնական տվյալներ, որոնք իրավատերը թույլատրել է կոլեկտիվ կառավարման կազմակերպությանն օգտագործել, այդ թվում՝ իրավատիրոջը նույնականացնելու և գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկությունները,

2) իրավատիրոջ ստեղծագործության կամ հարակից իրավունքների օբյեկտին վերաբերող պայմանագրերի և դրա օգտագործումից ստացված եկամուտների մասին տեղեկությունները,

3) ռեպերտուարի օգտագործման դիմաց ստացված վարձատրություններից կառավարման վճարների և այլ նպատակների համար կատարված գանձումները,

4) իրավատիրոջը հասանելիք գումարների մասին, որոնք դեռ չեն վճարվել,

5) բողոքների կարգավորման և վեճերի լուծման ընթացակարգերի մասին:

Հոդված 146. Տեղեկատվության հրապարակումը

1. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունն իր ինտերնետային կայքէջում հրապարակում է՝

1) հավատարմագրման վկայագիրը,

2) կառավարվող իրավունքները,

3) կանոնադրությունը,

4) իրավատերերի խորհրդի անդամների և գործադիր մարմնի ղեկավարի տվյալները,

5) կիրառվող դրույքաչափերը,

6) իրավատերերի և օգտագործողների հետ կնքվող պայմանագրերի օրինակելի ձևերը,

7) այն կոլեկտիվ կառավարման կազմակերպությունների ցանկը, որոնց հետ կնքել է ներկայացուցչական պայմանագրեր,

8) բողոքների կարգավորման և վեճերի լուծման գործող ընթացակարգերը,

9) իր մարմինների առաջիկա նիստերի վերաբերյալ հայտարարությունները, այդ թվում՝ նիստերի վերաբերյալ նյութերը,

10) տեղեկություններ տիրազուրկ ստեղծագործությունների և հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների նմանատիպ օբյեկտների վերաբերյալ, ներառյալ՝ հնարավորության դեպքում, տվյալ օբյեկտի անվանումը, հեղինակի, կատարողի, արտադրողի, հրատարակչի, այլ իրավատիրոջ անունը և ցանկացած այլ տեղեկություն, որը կարող է անհրաժեշտ լինել իրավատերերին նույնականացնելու համար:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկատվությունը հասանելի է մնում հանրությանը ինտերնետային կայքէջում և պարբերաբար թարմացվում է:

Հոդված 147. Հաշվետվությունները

1. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը յուրաքանչյուր տարվա համար, այդ տարվա ավարտից հետո ոչ ուշ, քան վեց ամսվա ընթացքում հրապարակում է հետևյալ հաշվետվությունները՝

1) իր կողմից կազմված գործունեության թափանցիկության տարեկան հաշվետվությունը, ներառյալ՝ անդամավճարների վերաբերյալ հաշվետվությունը.

2) անկախ աուդիտորական կազմակերպության աուդիտի եզրակացությունը:

2. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի ներգրավել անկախ աուդիտորական կազմակերպության՝ իր հաշվապահական (ֆինանսական) հաշվետվության աուդիտ անցկացնելու, ինչպես նաև վարձատրության հավաքագրման, բաշխման և վճարման ընթացքում դրամական միջոցների հետ գործառնությունների վարումը և փաստաթղթային ձևակերպումը, կազմակերպության կողմից հաստատված կարգերով նախատեսված՝ հավաքագրված վարձատրության բաշխման պահանջներին համապատասխանությունը, հատուկ միջոցների հաշվին կատարված նպատակային դրամական մուտքերի և վճարումների հաշվառումը, ինչպես նաև սույն օրենքով կազմակերպության գործունեությանը ներկայացվող այլ պահանջներ ստուգելու նպատակով:

3. Կազմակերպությունն աուդիտորական եզրակացության հաստատման (ստորագրման) օրվանից մեկամսյա ժամկետում պարտավոր է իր պաշտոնական կայքում հրապարակել աուդիտորական եզրակացությունը և համապատասխան հաշվապահական (ֆինանսական) հաշվետվությունը, որոնք հինգ տարվա ընթացքում

պետք է հասանելի լինեն իրավատերերի համար: Հաշվապահական (ֆինանսական) հաշվետվությունը և աուդիտի և ստուգման ենթակա ցանկացած այլ տեղեկատվություն չեն կարող դասվել գաղտնի բնույթ ունեցող տեղեկության, առևտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկատվության շարքին:

ԳԼՈՒԽ 20
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ և ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 148. Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների խախտում համարվող գործողությունները

1. Սույն օրենքով պահպանվող ստեղծագործության կամ դրա էական մասի կամ հարակից իրավունքների օբյեկտի ցանկացած օգտագործում անօրինական է, եթե նախապես, մինչև նման օգտագործումը ձեռք չի բերվել հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջ թույլտվությունը:

2. Ստեղծագործության էական մաս է համարվում ստեղծագործության որևէ մասը, որը տվյալ ստեղծագործությանը ծանոթ ցանկացած անձ ինքնուրույն կարող է նույնականացնել որպես այդ ստեղծագործության մաս:

3. Սույն օրենքի պահանջները խախտող անձը համարվում է հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների խախտող:

4. Առանց իրավատիրոջ թույլտվության պատրաստված կամ տարածված սույն օրենքով պահպանվող օբյեկտի օրինակները համարվում են կեղծ կամ նմանակված (կոնտրաֆակտ):

5. Նմանակված օրինակ է համարվում նաև Հայաստանի Հանրապետությունում սույն օրենքով պահպանվող ստեղծագործության, հնչյունագրի կամ տեսագրության այն օրինակը, որն առանց դրա իրավատիրոջ համաձայնության Հայաստանի Հանրապետություն է ներմուծվում այլ պետություններից, որտեղ այդ

ստեղծագործությունը, ինչյունագիրը կամ տեսագրությունը երբևէ չի պահպանվել, կամ դադարել է դրա պահպանությունը:

6. Ուրիշի ստեղծագործությունը ամբողջությամբ կամ մասամբ իբրև իրենը ներկայացնելը համարվում է գրագողություն:

Հոդված 149. Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների պաշտպանության եղանակները

1. Հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատերն իր իրավունքները պաշտպանելու նպատակով կարող է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել դատարան:

2. Հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատերն իր իրավունքները պաշտպանելու նպատակով, դատական կամ արբիտրաժային կարգով կամ օրենքով նախատեսված այլ միջոցներով իր իրավունքները խախտողից կարող է պահանջել՝

1) իր իրավունքների ճանաչում.

2) մինչև իրավախախտումը գոյություն ունեցող դրության վերականգնում և իրավունքը խախտող կամ խախտման վտանգ պարունակող գործողությունների կասեցում.

3) նմանակված օրինակների, դրանց պատրաստման համար օգտագործվող նյութերի ու սարքավորումների բռնագրավում կամ ոչնչացում.

4) հոնորարի կամ վարձատրության կրկնակի չափով փոխհատուցում, որը իրավատերը կստանար, եթե իրավախախտողը թույլտվություն ունենար հեղինակային իրավունքի օբյեկտի օգտագործման համար, կամ

5) փաստացի խախտման վնասին համարժեք վնասների հատուցում, ներառյալ՝ բաց թողնված օգուտը,

6) կամ փոխհատուցում սահմանված նվազագույն աշխատավարձի 50-ապատիկից մինչև 2000–ապատիկի չափով՝ օրենքով սահմանված կարգով.

7) դատական ակտի հրապարակումը Հայաստանի Հանրապետությունում գործող զանգվածային լրատվության միջոցներով՝ դատարանի կողմից նախատեսված չափով և մասով, իրավախախտողի ծախսերի հաշվին.

8) իր իրավունքների պաշտպանության հետ կապված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ միջոցների կիրառում:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված դեպքերում խախտման առկայությունը բավարար է վնասի հատուցումը սահմանելու համար: Նշված դեպքում փոխհատուցման չափը սահմանելիս հաշվի է առնում կոնկրետ գործի առանձնահատկությունները, ներառյալ՝ խախտման բնույթը և հետևանքները, իրավախախտող անձի կարգավիճակը, ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում կատարած լինելու հանգամանքը մեղքի առկայությունը և աստիճանը, նախկինում նմանատիպ խախտում կատարած լինելու հանգամանքը, գույքային դրությունը, իրավատիրոջ պահանջով խախտումը վերացրած լինելու հանգամանքը: Ընդ որում, եթե իրավատերը մինչև դատարան դիմելը ծանուցել է իրավախախտողին իրավախախտման վերաբերյալ՝ պահանջելով իրավախախտողից դադարեցնել իրավախախտումը և վկայակոչելով իրավախախտումը չդադարեցնելու դեպքում սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված պահանջների ներկայացման հնարավորությունը, և իրավախախտողը հրաժարվել է դադարեցնել իրավախախտումը կամ չի դադարեցրել իրավախախտումը իրավատիրոջ ծանուցումը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում, ապա փոխհատուցման չափը սահմանվում է ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի 200-ապատիկի չափով:

4. Մի քանի իրավատեր ունեցող ստեղծագործության դեպքում, սույն հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված ընդհանուր փոխհատուցման չափը չի կարող գերազանցել նույն կետով նախատեսված չափը և փոխհատուցվում է պահանջ ներկայացրած իրավատիրոջը այն համամասնությամբ, որը ստեղծագործության օգտագործումից ստացվող օգուտների բաշխման համար նախատեսված է իրավատերերի միջև համաձայնությամբ կամ օրենքով:

5. Սույն հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված սահմանված պահանջը չի կարող ներկայացվել կոլեկտիվ կառավարող կազմակերպությունների կողմից այն դեպքերում, երբ ստեղծագործության օգտագործման համապատասխան եղանակի համար Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանվել են հեղինակային վարձատրության նվազագույն դրույքաչափեր:

6. Սույն օրենքով սահմանված կարգով հավատարմագրված կոլեկտիվ կառավարման կազմակերպությունն իրավունք ունի իրավունքների խախտողից պահանջել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված վարձատրության նվազագույն դրույքաչափերի կրկնակիի չափով փոխհատուցում՝ հիմք ընդունելով սույն հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը:»:

7. Սույն հոդվածի երկրորդ մասի 4-6-րդ կետերում նշված միջոցների ընտրության իրավունքը պատկանում է հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջը:

8. Հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատերը կարող է պահանջել, որ այն անձինք, ովքեր որևէ կերպ առնչվում են սույն օրենքով պահպանվող իրավունքների խախտմանը (արտադրողներ, տպագրողներ, ներկրողներ, նմանակված օրինակներ կամ իրավախախտում առաջացնող սարքավորումներ տիրապետողներ), պահանջի դեպքում անմիջապես տեղեկություններ հայտնեն կեղծ օրինակների արտադրությանը և տարածմանը մասնակցող երրորդ անձանց, ինչպես նաև այդ օրինակների ձեռքբերման աղբյուրների ու տարածման ուղիների մասին և ներկայացնեն խախտմանն առնչվող փաստաթղթերը:

Սույն մասում նշված անձինք, որոնք հրաժարվում են տրամադրել պահանջված տեղեկությունը կամ փաստաթղթերը, պատասխանատվություն են կրում այն վնասների համար, որոնք կարող են պատճառվել նշված պարտականությունը կատարելուց հրաժարվելու հետևանքով:

9. Հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջ չպահանջած նմանակված օրինակները, ինչպես նաև դրանց ստեղծման և վերարտադրման համար օգտագործված նյութերն ու սարքավորումները դատարանի վճռով կարող են ոչնչացվել:

ԳԼՈՒԽ 21

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆՑՄԱՄԲ, ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Հոդված 150. Իրավունքների կառավարման վերաբերյալ տեղեկատվության պաշտպանությունը

1. Անձը համարվում է սույն օրենքով սահմանված բացառիկ իրավունքները խախտող, եթե նա կատարում է թվարկված գործողություններից որևէ մեկը, որով դրդում, հնարավորություն է տալիս, նպաստում կամ թաքցնում է սույն օրենքով սահմանված բացառիկ իրավունքների որևէ խախտում, այն է՝

1) վերացնում կամ փոփոխում է իրավունքների կառավարման վերաբերյալ ցանկացած էլեկտրոնային տեղեկատվությունը.

2) վերարտադրում, տարածում, վարձույթով է տալիս կամ հանրությանը հաղորդում է հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների օբյեկտը, որի վրա իրավունքների կառավարման վերաբերյալ էլեկտրոնային տեղեկատվությունը վերացվել կամ փոփոխվել է առանց թույլտվության:

2. Սույն հոդվածի իմաստով «իրավունքների կառավարման վերաբերյալ տեղեկատվություն» է համարվում իրավատերերի կողմից տրամադրված ցանկացած տեղեկատվություն, որը նույնականացնում է հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքի օբյեկտը, հեղինակին, իրավատիրոջը կամ օգտագործման պայմանների մասին տեղեկատվությունը, կամ այդպիսի տեղեկատվություն պարունակող կամ ներկայացնող համապատասխան թվերը և կոդերը, որոնք նշված են հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների օբյեկտի օրինակի վրա կամ ի հայտ են գալիս հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների օբյեկտը հանրությանը հաղորդելիս:

Հոդված 151. Տեխնոլոգիական միջոցները

1. Անձը համարվում է սույն օրենքով սահմանված բացառիկ իրավունքները խախտող, եթե նա շրջանցում է հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների արդյունավետ տեխնոլոգիական միջոցները:

2. Անձը համարվում է սույն օրենքով սահմանված բացառիկ իրավունքները խախտող, եթե նա պատրաստում, ներմուծում, տարածում, վաճառում, վարձույթով

տալիս, վաճառքի կամ վարձույթով տալու համար գովազդում կամ առևտրային նպատակներով տնօրինում է սարքեր, արտադրանք կամ բաղադրամասեր կամ համակարգչային ծրագրեր կամ մատուցում է ծառայություններ, որոնք ՝

1) առաջադրվում, գովազդվում կամ շուկա են հանվում արդյունավետ տեխնոլոգիական միջոցները շրջանցելու նպատակով, կամ

2) արդյունավետ տեխնոլոգիական միջոցները շրջանցելուց բացի, ունեն սահմանափակ առևտրային նշանակության սահմանափակ նպատակ կամ օգտագործում, կամ

3) որոնք ի սկզբանե նախագծված, արտադրված, հարմարեցված կամ կատարված են շրջանցման հնարավորություն ստեղծելու կամ այն հեշտացնելու նպատակով:

3. Սույն հոդվածի իմաստով «տեխնոլոգիական միջոցներ» է համարվում ցանկացած տեխնոլոգիա, սարք բաղադրիչ մաս կամ համակարգչային ծրագիր, որ նախատեսված է բնականոն օգտագործման ընթացքում արգելելու կամ սահմանափակելու հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների օբյեկտների նկատմամբ այն գործողությունները, որոնք իրավատիրոջ կողմից թույլատրված չեն սույն օրենքի համաձայն: Այդ միջոցները համարվում են արդյունավետ, եթե պահպանվող հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների օբյեկտների օգտագործումը վերահսկվում է իրավատիրոջ կողմից՝ մուտքի վերահսկման կամ պաշտպանության գործընթացների կիրառմամբ, ինչպիսիք են պաշտպանության ապահովման նպատակով հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների օբյեկտների կոդավորումը, խառնաշփոթ դասավորումը կամ այլ ձևափոխումը կամ պատճենումը վերահսկելու մեխանիզմը, որոնցով իրագործվում է պաշտպանության ապահովումը:

Հոդված 152. Հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների խախտումները համակարգչային ցանցերի միջոցով

1. Ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որն ապահովում է հոսթինգի և (կամ) տվյալների փոխանցման (ինտերնետ կամ ինտրանետ) ծառայություններ, այդ թվում՝ ինտերնետ մատակարարի, համարվում է մեղսակից, եթե ուղղակիորեն

նպաստում է հեղինակային իրավունքի և (կամ) հարակից իրավունքների խախտմանը, և պատասխանատու է այդ իրավունքների խախտման համար եթե նա՝

1) ունենալով հեղինակային իրավունքի և (կամ) հարակից իրավունքների խախտմամբ լույսընծայվող և (կամ) օգտագործվող օբյեկտները համապատասխան պահին արգելափակելու, մուտքը սահմանափակելու և (կամ) ոչնչացնելու տեխնիկական հնարավորություն և տեղեկացված լինելով համապատասխան իրավունքի իրավատերերի կամ նրանց ներկայացուցիչների կողմից տվյալ խախտման մասին (կոնկրետ օբյեկտի նշմամբ), չի կատարել նշված օբյեկտներն արգելափակելու, մուտքը սահմանափակելու և (կամ) ոչնչացնելու վերաբերյալ հեղինակային իրավունքի և (կամ) հարակից իրավունքների իրավատերերի պահանջները.

2) տեղեկացված լինելով հեղինակային իրավունքի և (կամ) հարակից իրավունքների ոլորտում ապօրինի գործունեության մասին՝ նպաստում, ֆինանսավորում և աջակցում է այլ անձի անօրինական գործողություններին.

3) հրապարակում է կեղծ տեղեկություններ, փոփոխում կամ հեռացնում է հեղինակային իրավունքի և (կամ) հարակից իրավունքների իրավատերերի մասին տեղեկատվությունը, այդ թվում՝ տարածում է ստեղծագործությունների և (կամ) հարակից իրավունքների օբյեկտների այն պատճենները, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը փոփոխվել կամ հեռացվել է.

4) միտումնավոր կերպով երրորդ անձանց մատչելի է դարձնում ցանկացած տեղեկատվություն (հղումներ, վեբ հասցե և այլն), ընձեռելով հեղինակային իրավունքի և (կամ) հարակից իրավունքների օբյեկտների անօրինական հասանելիության հնարավորություն:

2. Ֆիզիկական կամ իրավաբանական անձը, ով ապահովում է հոսթինգի և (կամ) տվյալների փոխանցման (ինտերնետ կամ ինտրանետ) ծառայություններ, այդ թվում՝ ինտերնետ մատակարարը, պատասխանատու չեն այլ անձանց անօրինական գործողությունների համար, ովքեր օգտվել են իրենց ծառայություններից հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները խախտելու նպատակով ՝ պայմանով, որ չգիտեն այդ անձանց գործողությունների մասին կամ հնարավորություն չունեն սահմանափակելու հեղինակային իրավունքի և (կամ)

հարակից իրավունքների խախտմամբ լույսընծայված կամ օգտագործված օբյեկտների մուտքը կամ ոչնչացնելու դրանք:

Հոդված 153. Իրավունքների սահմանափակումների կիրառումը

1. Եթե միջոցները, որոնք թույլ են տալիս երրորդ անձանց օգտվել սույն օրենքի 5-րդ գլխով նախատեսված սահմանափակումներից, իրավատիրոջ կողմից կամավոր չեն տրամադրվել, ապա իրավատերը, ով սույն օրենքի համաձայն կիրառում է տեխնոլոգիական միջոցներ, պետք է մատչելի դարձնի այդ միջոցները՝ այն ծավալով, որքանով, որ դրանք անհրաժեշտ են այդ սահմանափակումներից օգտվելու համար, և պայմանով, որ օգտվողն ունի համապատասխան հեղինակային իրավունքով կամ հարակից իրավունքներով պահպանվող օբյեկտի հասանելիության օրինական իրավունք:

2. Եթե իրավատերը մատչելի չի դարձնում սույն հոդվածի 1-ին մասում նշված անհրաժեշտ միջոցները, որոնք պահանջվում են այդ սահմանափակումները կիրառելու համար, ապա օգտվողները կարող են դատական կամ արբիտրաժային կարգով պահանջել դրանց տրամադրումը:

ԳԼՈՒԽ 22
ՕՐԵՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 154. Օրենքի գործողությունը

1. Սույն օրենքի դրույթները կիրառվում են այն հեղինակների և հարակից իրավունքների իրավատերերի նկատմամբ, ովքեր Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են կամ մշտապես բնակվում են Հայաստանի Հանրապետության տարածքում:

2. Սույն օրենքի դրույթները կիրառվում են այն հեղինակների ստեղծագործությունների կամ կատարողների կատարումների նկատմամբ, ովքեր Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ չեն կամ մշտապես չեն բնակվում Հայաստանի Հանրապետության տարածքում, սակայն նրանց ստեղծագործությունները կամ կատարումները առաջին անգամ լույս են ընծայվել

Հայաստանի Հանրապետությունում, եթե հեղինակը կամ կատարողը Հայաստանի Հանրապետության տարածքում մշտապես բնակվող անձ է:

Ստեղծագործությունը Հայաստանի Հանրապետության տարածքում առաջին անգամ լույս ընծայված է համարվում նաև, եթե առաջին անգամ այլ պետության տարածքում լույս ընծայվելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, լույս է ընծայվում Հայաստանի Հանրապետության տարածքում:

3. Սույն օրենքի դրույթները կիրառվում են նաև հնչյունագրերի նկատմամբ, որոնց արտադրողները Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են կամ Հայաստանի Հանրապետության տարածքում մշտապես բնակվող անձինք: Օտարերկրյա հնչյունագիր արտադրողի հնչյունագրերի նկատմամբ կիրառվում են սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթները:

4. Սույն հոդվածի 3-րդ մասի դրույթները համապատասխանաբար կիրառվում են ֆիլմերի, ռադիոհեռուստատեսային հաղորդումների, նախկինում չհրապարակված ստեղծագործությունների հրատարակությունների, ինչպես նաև տվյալների բազաների նկատմամբ:

Հոդված 155. Օտարերկրյա անձանց իրավունքները

1. Օտարերկրյա պետությունների քաղաքացիները կամ ռեզիդենտները, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան կամ փոխադարձության սկզբունքով, օգտվում են սույն օրենքով նախատեսված իրավունքներից և կրում են պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին և ռեզիդենտներին հավասար՝

1) ոչ գույքային իրավունքների մասով՝ ցանկացած դեպքում.

2) վերավաճառքի իրավունքի մասով՝միայն փոխադարձությամբ:

2. Եթե ստեղծագործության վրա չի տարածվում սույն օրենքի 154-րդ հոդվածի գործողությունը, ապա նման ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը պահպանվում է ստեղծագործության առաջին հրապարակման պահից, եթե դա իրականացվել է Հայաստանի Հանրապետությունում:

Հոդված 156. Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների միջև հարաբերությունները

1. Սույն օրենքով տրամադրված հարակից իրավունքների պահպանությունը որևէ կերպ չպետք է վնաս հասցնի հեղինակային իրավունքի պահպանությանը և չպետք է ազդի դրա վրա:

2. Սույն օրենքի դրույթները, որոնք վերաբերում են հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործությունների տարրերին, հեղինակության կանխավարկածին, համահեղինակությանը, բաղադրյալ ստեղծագործություններին, հեղինակի գույքային իրավունքների բովանդակությանը, հեղինակային իրավունքի սահմանափակումներին, հեղինակային իրավունքի գործողության ժամկետի հաշվարկին, հեղինակային իրավունքների փոխանցմանն ու օգտագործման թույլտվությունը, ծառայողական ստեղծագործություններին այնքանով, որքանով կիրառելի է (mutatis mutandis) կիրառվում են հարակից իրավունքների նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքի 13-րդ գլխում:

3. Սույն օրենքի դրույթները, որոնք վերաբերում են տիրազուրկ ստեղծագործություններին, այնքանով, որքանով կիրառելի է (mutatis mutandis) կիրառվում են հանրային գրադարանների, ուսումնական հաստատությունների, թանգարանների, ինչպես նաև արխիվների ու ֆիլմադարանների կամ ձայնադարանների հավաքածուներում ընդգրկված հնչյունագրերի նկատմամբ, մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը հեռարձակող կազմակերպությունների կողմից արտադրված և նրանց արխիվներում պարունակվող հնչյունագրերի նկատմամբ, ինչպես նաև հարակից իրավունքներով պահպանվող օբյեկտների նկատմամբ, որոնք ամրագրված կամ ընդգրկված են տիրազուրկ ստեղծագործություններում կամ հնչյունագրերում կամ դրանց անբաժանելի մասն են կազմում:

Հոդված 157. Պահպանության ժամկետների համեմատությունը

1. Սույն օրենքով սահմանված պահպանության ժամկետները կիրառվում են հարակից իրավունքների օտարերկրյա այն իրավատերերի նկատմամբ, որոնք օգտվում են սույն օրենքով նախատեսված պահպանությունից: Այդ ժամկետներն ավարտվում են այն երկրում պահպանության ավարտի օրը, որի քաղաքացին կամ

ռեզիդենտն է իրավատերը, ընդ որում, դրանք չեն կարող գերազանցել սույն օրենքով սահմանված ժամկետները:»

Հոդված 158. Հանրության սեփականություն համարվող ստեղծագործությունները

1. Սույն օրենքով սահմանված գույքային իրավունքների գործողության ժամկետի ավարտից հետո ստեղծագործությունը դառնում է հանրության սեփականությունը և կարող է առանց թույլտվության և վարձատրության ազատ օգտագործվել ցանկացած անձի կողմից՝ պահպանելով հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքները:

2. Այն ստեղծագործությունները, որոնք Հայաստանի Հանրապետության տարածքում երբևիցե պահպանությունն չեն ստացել, համարվում են հանրության սեփականություն:

3. Հանրության սեփականություն համարվող ստեղծագործությունները կարող է ազատ օգտագործել յուրաքանչյուր անձ՝ առանց հեղինակային վարձատրություն վճարելու: Ընդ որում, պետք է պահպանվեն հեղինակության իրավունքը, հեղինակի համբավի և արժանապատվության իրավունքը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ԳԼՈՒԽ 23
ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 159. Անցումային դրույթներ

1. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը և սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին կնքված պայմանագրերը կամ ձեռք բերված իրավունքները և պարտականությունները շարունակում են գործել եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

2. Սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին գործող կոլեկտիվ կառավարման կազմակերպություններն առանց սույն օրենքով սահմանված կարգով հավատարմագրման իրենց գործունեությունը կարող են շարունակել մինչև սույն

օրենքով կոլեկտիվ կառավարող կազմակերպության առաջին հավատարմագրման պահը:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին սույն հոդվածի 2-րդ մասում նշված կազմակերպությունների կողմից օգտագործողների հետ կնքված պայմանագրերը գործում են մինչև սույն օրենքով կոլեկտիվ կառավարող կազմակերպության առաջին հավատարմագրման մասին որոշման հիման վրա հավատարմագրի տրման օրը:

4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է հեղինակային վարձատրության նվազագույն դրույքաչափերը, ինչպես նաև սույն օրենքի 121-րդ հոդվածի 8-րդ մասով, 126-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգերը:

5. Պետական կառավարման համակարգի մարմինը սույն օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ մասերով նախատեսված կարգերը հաստատում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում:

6. Պետական կառավարման համակարգի մարմինը սույն օրենքով սահանված կարգով կոլեկտիվ կառավարող կազմակերպությունների առաջին հավատարմագրումն իրականացնելու գործընթացն սկսում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում:

Հոդված 161. Սույն օրենքի գործողությունը ժամանակի մեջ

1. Սույն օրենքը կիրառվում է հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների այն օբյեկտների նկատմամբ, որոնք սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ հանրության սեփականություն չեն դարձել:

2. Սույն օրենքը կիրառվում է տեքստով երաժշտական ստեղծագործությունների նկատմամբ, որոնց առնվազն երաժշտությունը կամ տեքստը դեռ հանրության սեփականությունը չեն դարձել սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ, և այն տեքստով երաժշտական ստեղծագործությունների նկատմամբ, որոնք ստեղծվել են այդ օրը կամ այդ օրվանից հետո:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի դրույթները կիրառվում են առանց վնասելու երաժշտական ստեղծագործությունների կամ տեքստերի օգտագործման այն գործողություններին, որոնք տեղի են ունեցել 1-ին մասում նշված օրվանից առաջ:

Հոդված 162. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: